

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ
ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՎ

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ
սովորող ուսանողների համար

(Հեռակա ուսուցում)

ԵՐԵՎԱՆ – 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ I.

1. ԵՂՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ3

ԲԱԺԻՆ II.

- ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ
ԾՐԱԳԻՐ20

I ԲԱԺԻՆ

1. ԵՊՀ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳ

*(Հաստատված է ԵՊՀ գիտական խորհրդի 2017 թ.
մայիսի 4-ի թիվ 7 նիստում)*

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1. Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը (այսուհետև՝ կարգ) սահմանում է Երևանի պետական համալսարանում (այսուհետև՝ ԵՊՀ) առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կանոնները:
- 1.2. Կարգը ներառում է ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացակարգերը, գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը, ակադեմիական առաջադիմության չափանիշները և այլն:
- 1.3. Կարգը մշակվել է «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտա-

կան կրթության մասին» ՀՀ օրենքներին, ԵՊՀ կանոնադրությանը համապատասխան:

2. Ուսանողի ուսումնական բեռնվածությունը և կրթական ծրագրերի աշխատածավալը

- 2.1. ԵՊՀ-ում բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում ուսանողի տարեկան ուսումնական բեռնվածությունը առկա ուսուցման համար սահմանվում է 1800 ժամ, որը համարժեք է 60 ECTS կրեդիտի, իսկ հեռակա ուսուցման համար՝ 1440 ժամ, որը համարժեք է 48 ECTS կրեդիտի: 1 ECTS կրեդիտը համարժեք է ուսանողի 30 ժամ լրիվ (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) ուսումնական բեռնվածությանը: Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ բեռնվածության առավելագույն չափը 45 ժամ է, որը համարժեք է 1,5 ակադեմիական կրեդիտի:
- 2.2. Բակալավրի կրթական ծրագրի լրիվ աշխատածավալը 240 կրեդիտ է, իսկ մագիստրոսի կրթական ծրագրինը՝ 120 կրեդիտ:
- 2.3. Առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրի տևողությունը 4 տարի է (8 կիսամյակ), իսկ մագիստրոսի կրթական ծրագրինը՝ 2 տարի (4 կիսամյակ): Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 20-շաբաթյա տևողություն, որը բաշխվում է հետևյալ հերթականությամբ. 8 շաբաթ լսարանային պարապմունքներ, 1 շաբաթ ընթացիկ քննություններ, 7 շաբաթ լսարանային պարապմունքներ, 1 շաբաթ ընթացիկ քննություններ ու ստուգաքնններ և 3 շաբաթ եզրափակիչ քննություններ:
- 2.4. Հեռակա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրի տևողությունը 5 տարի է (10 կիսամյակ): Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 16-շաբաթյա տևողություն, որը բաշխվում է հետևյալ հերթականությամբ. 4 շաբաթ լսարանային պարապմունքներ¹, 1 շաբաթ ինքնուրույն աշխատանք, 2 շաբաթ ընթացիկ քննություններ, 3 շաբաթ ինքնուրույն աշխատանք, 2 շաբաթ ընթացիկ քննություններ և 4 շաբաթ եզրափակիչ քննություններ:
- 2.5. Հեռակա ուսուցմամբ մագիստրոսի կրթական ծրագրի տևողությունը 2,5 տարի է (5 կիսամյակ): Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 16-շաբաթյա տևողություն, որը բաշխվում է հետևյալ հերթականությամբ. 3 շաբաթ լսարանային պարապմունքներ, 2 շաբաթ ինքնուրույն աշխատանք, 2 շաբաթ ընթացիկ քննություններ, 3 շաբաթ ինքնուրույն աշխատանք, 2 շաբաթ ընթացիկ քննություններ և 4 շաբաթ եզրափակիչ քննություններ:
- 2.6. Մանկավարժի որակավորում ստանալու համար համապատասխան մասնագիտությունների ուսանողները լրացուցիչ պետք է կուտակեն 30 կրեդիտ՝ համաձայն «Երևանի պետական համալսարանի բակալավրիատի շրջանավարտներին մանկավարժի որակավորում շնորհելու կարգ»-ի:
- 2.7. Բակալավրի կրթական ծրագրի յուրաքանչյուր կիսամյակային քննաշրջանում նախատեսվում է առավելագույնը 5 քննություն, բացառությամբ առաջին կիսամյակի, որտեղ քննությունների թիվը չի գերազանցում 3-ը: Մագիստրոսի կրթական ծրագրում այդ քննու-

¹ Ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ և ռեկտորի թույլտվությամբ լսարանային պարապմունքները, տրված ժամաքանակների սահմաններում (լեզվական մասնագիտությունների գծով՝ նաև ժամաքանակի ավելացմամբ), կարող են իրականացվել նաև այլ գրաֆիկով:

թյունների թիվը սահմանվում է ըստ օրինակելի ուսումնական պլանի:

- 2.8. Ավարտական աշխատանքը և մագիստրոսական թեզը գնահատվում են 20 միավորանոց սանդղակով՝ համաձայն ԵՊՀ-ում ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգերի:

3. Գիտելիքների ստուգումը և գնահատումը

3.1. Համակարգի հիմնադրույթները

3.1.1. ԵՊՀ-ում գործում է ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոն համակարգը, որի կիրարկման հիմնական նպատակներն են՝

- ա) կազմակերպել ուսումնառության համաչափ գործընթաց և խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը,
- բ) ներմուծել հետադարձ կապի մեխանիզմներ՝ գնահատման արդյունքները դասախոսների և ուսանողների կողմից որպես դասավանդման և ուսումնառության շարունակական բարելավման միջոց օգտագործելու համար:

3.1.2. Գնահատումը ներառում է հետևյալ բաղադրամասերը.

- ա) դասընթացի (ուսումնական մոդուլի) ենթաբաժինների և ծրագրով նախատեսված անհատական առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ),
- բ) ամբողջ դասընթացի կամ ուսումնական մոդուլի եզրափակիչ գնահատում քննաշրջանում, որը ենթադրում է դասընթացի կամ կրթական մոդուլի համար սահմանված կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակի գնահատում,
- գ) ստուգման արդյունքների ինտեգրում՝ ընթացիկ և եզրափակիչ գնահատումների հիման վրա դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականի ձևավորում:

3.1.3. Ելնելով կրթական ծրագրի ուսումնական պլանով նախատեսված դասընթացների (ուսումնական մոդուլների) աշխատաձևավալից, պարապմունքի ձևից, դասավանդման մեթոդներից և հաշվի առնելով դասընթացի կարևորության աստիճանը ուսանողի մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձևավորման մեջ՝ դասընթացներն ըստ գնահատման ձևի բաժանվում են 4 խմբի՝

- ա) *եզրափակիչ գնահատումով,*
- բ) *առանց եզրափակիչ գնահատման,*
- գ) *առանց ընթացիկ գնահատման,*
- դ) *ստուգարքային:*

3.2. Դասընթացների գնահատումը

3.2.1. *Եզրափակիչ գնահատումով դասընթացի* դեպքում, քննաշրջանի ընթացքում անցկացվող եզրափակիչ քննությունից բացի, նախատեսվում է 2 ընթացիկ քննություն:

Ընթացիկ և եզրափակիչ քննություններն անցկացվում են գրավոր կամ բանավոր՝ ելնելով դասընթացի դասավանդման և ուսումնառության ձևերից, ինչպես նաև ակնկալվող կրթական վերջնարդյունքների բնույթից: Քննությունների անցկացման ձևը (գրավոր կամ բանավոր) նշվում է կրթական ծրագրի մասնագրում:

3.2.2. *Եզրափակիչ գնահատումով դասընթացից* (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային) գնահատականը /միավորը ($Գ_{արդ.}$) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ հետևյալ բաղադրամասերի՝

ա) ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 2 ընթացիկ քննությունների արդյունքներից ($\Sigma Բ_{ընթ.}$), որոնցից յուրաքանչյուրին հատկացվում է առավելագույնը 5 միավոր,

բ) եզրափակիչ քննության արդյունքից ($Բ_{եզր.}$), որը կարող է գնահատվել առավելագույնը 10 միավոր:

Դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականը/միավորը հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար.

$$Գ_{արդ.} = \Sigma Բ_{ընթ.} + Բ_{եզր.}:$$

Ըստ այդմ՝ *եզրափակիչ գնահատումով դասընթացի* գնահատումն իրականացվում է համաձայն *Աղյուսակ 1*-ի, որտեղ տրված են գնահատման առանձին բաղադրամասերի համար սահմանված հնարավոր առավելագույն միավորները (բոլոր բաղադրամասերը գնահատվում են ամբողջ միավորներով²).

Աղյուսակ 1.

Գնահատման բաղադրամասը	Բ _{ընթ.1}	Բ _{ընթ.2}	Բ _{եզր.}	Գ _{արդ.}
Առավելագույն միավորը	5	5	10	20

3.2.3. *Առանց եզրափակիչ գնահատման դասընթացը* գնահատվում է կիսամյակի ընթացքում ուսումնական նյութի յուրացման աստիճանը որոշող 2 ընթացիկ քննությունների արդյունքներով:

3.2.4. *Առանց եզրափակիչ գնահատման դասընթացից* (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային) գնահատականը/միավորը ($Գ_{արդ.}$) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 2 ընթացիկ քննությունների արդյունքներից ($\Sigma Բ_{ընթ.}$), որոնցից յուրաքանչյուրին հատկացվում է առավելագույնը 10 միավոր:

Դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականը/միավորը հաշվարկվում է որպես գնահատման՝ առանձին ընթացիկ քննություններից վաստակած միավորների գումար.

$$Գ_{արդ.} = \Sigma Բ_{ընթ.}:$$

Ըստ այդմ՝ *առանց եզրափակիչ գնահատման դասընթացի* գնահատումն իրականացվում

² Ընթացիկ քննության մեկ առաջադրանքի արժեքը առնվազն 1 միավոր է, իսկ գնահատման քայլը՝ 0,5: Առաջադրանքների գնահատականները գումարվում են, և վերջնական արդյունքը ներկայացվում է ամբողջ թվով:

է համաձայն *Աղյուսակ 2*-ի, որտեղ տրված են գնահատման առանձին բաղադրամասերի համար սահմանված հնարավոր առավելագույն միավորները (բոլոր բաղադրամասերը գնահատվում են ամբողջ միավորներով³).

Աղյուսակ 2.

Գնահատման բաղադրամասը	Ք _{ընթ 1}	Ք _{ընթ 2}	Գ _{արդ.}
Առավելագույն միավորը	10	10	20

Վերոնշյալը (Աղյուսակ 1 և Աղյուսակ 2) կիրառվում է նաև հեռակա ուսուցման համար:

3.2.5. Լաբորատոր աշխատանքի ձև ունեցող դասընթացի ընթացիկ քննությանը ուսանողի մասնակցությունը թույլատրվում է նախորդող ժամանակահատվածում նախատեսված լաբորատոր աշխատանքների առնվազն 60 % կատարողականի (փորձերի կատարում և հանձնում) դեպքում: Հակառակ դեպքում ուսանողին չի թույլատրվում մասնակցել ընթացիկ քննությանը, իսկ քննական տեղեկագրում նշանակվում է «0» միավոր:

3.2.6. Դասընթացը կարող է լինել *եզրափակիչ գնահատումով* միայն այն դեպքում, եթե կիսամյակում ունի առնվազն 60 ժամ լսարանային բեռնվածություն:

3.2.7. *Առանց ընթացիկ գնահատման* (միայն եզրափակիչ քննությամբ) և *առանց եզրափակիչ գնահատման* կարող են լինել հիմնականում փոքրածավալ մասնագիտական դասընթացները:

3.2.8. *Ստուգարքային* կարող են լինել բակալավրիատի ընդհանուր կրթական կառուցամասի դասընթացները, մագիստրատուրայի ընդհանուր դասընթացները, ինչպես նաև մագիստրատուրայի «Մասնագիտության արդի հիմնախնդիրները» մասնագիտական դասընթացը:

3.3. Գնահատման գործընթացի կազմակերպումը

3.3.1. Կիսամյակի առաջին 2 շաբաթվա ընթացքում դասախոսը ուսանողներին տեղեկացնում է գիտելիքների ստուգման ձևերի, հարցաշարերի և ժամկետների, ինչպես նաև գնահատման մեթոդների ու չափանիշների մասին:

3.3.2. Ֆակուլտետները կազմում են քննաշրջանների ժամանակացույցները, որոնք հաստատում է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը: Հաստատված ժամանակացույցի մեկ օրինակը հանձնվում է ուսումնամեթոդական վարչություն, իսկ ուսանողներին տեղեկացվում է նրանց համալսարանական էլեկտրոնային փոստի միջոցով:

3.3.3. Ընթացիկ քննություններն անցկացվում են՝ առկա ուսուցման դեպքում՝ ուսումնառության կիսամյակի 9-րդ և 17-րդ շաբաթներում, իսկ հեռակա ուսուցման դեպքում՝ 6÷7-րդ և 11÷12-րդ շաբաթներում (այդ շաբաթներում դասեր չեն նախատեսվում):

³ Տե՛ս սույն կարգի 3.2.2. կետը:

- 3.3.4. Եզրափակիչ քննությունները առկա ուսուցման դեպքում անցկացվում են կիսամյակային քննաշրջաններում՝ 18÷20-րդ շաբաթներում, իսկ հեռակա ուսուցման դեպքում՝ 13÷16-րդ շաբաթներում:
- 3.3.5. Բանավոր քննության և ստուգարքի ավարտից հետո դասախոսը տեղեկագիրը սկանավորման համար նույն օրը ներկայացնում է դեկանատ, իսկ գրավոր քննության տեղեկագիրը դասախոսը սկանավորման համար դեկանատ է ներկայացնում տվյալ քննության ավարտին հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում:
- 3.3.6. Ընթացիկ և եզրափակիչ քննությունների ու ստուգարքների գնահատականը հրապարակելու օրը ուսանողն իրավունք ունի այն բողոքարկելու գնահատումն իրականացրած դասախոսին կամ քննական հանձնաժողովին, իսկ վերջինիս հետ անհամաձայնության դեպքում՝ նույն օրը գրավոր դիմելու դասընթացը կազմակերպող ամբիոնի վարիչին, անհրաժեշտության դեպքում նաև ֆակուլտետի դեկանին:
- 3.3.7. Գրավոր քննությունները գրառվում են ուսանողներին տրամադրված սահմանված նմուշի տեսրեքում: Ուսանողը և դասախոսը պետք է պահպանեն քննական տեսքում ներկայացված պահանջները:
- 3.3.8. Ստուգարքի/եզրափակիչ քննության տեղեկագրում ուսանողի անվան դիմաց յուրաքանչյուր նշում կատարվում է միայն ուսանողի ներկայությամբ (բացառությամբ «Չն»-ի): Եզրափակիչ գնահատումով դասընթաց(ներ)ի ընթացիկ քննությունները հանձնելուց հետո, եթե ուսանողի արդյունարար միավորը 8 կամ բարձր է, ապա ուսանողն իրավունք ունի տվյալ դասընթացի եզրափակիչ քննությանը, հետևաբար նաև լուծարքային շրջանին չներկայանալ, և այդ դեպքում տեղեկագրի համապատասխան պունակներում կատարվում է «Չն» նշումը, և պահպանվում է ուսանողի 8 կամ բարձր միավորը: Ստուգարքին/քննությանը չներկայանալու դեպքում կատարվում է «Չն» նշումը:
- 3.3.9. Քննաշրջանը կամ առանձին ստուգարքներ/ քննություններ ուսանողը համապատասխան հիմնավորմամբ ժամկետից շուտ կարող է հանձնել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի թույլտվությամբ:
- 3.3.10. Ընթացիկ քննությունները, ստուգարքները և եզրափակիչ քննությունները հեռավար ձևով կազմակերպելը թույլատրվում է միայն ռեկտորի հրամանով:

3.4. Գնահատման սանդղակը

3.4.1. ԵՊՀ-ում ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է 20 միավորանոց սանդղակը, որը ներկայացված է ստորև.

Աղյուսակ 3.

Գնահատման արդյունարար միավորը	Գնահատականը
18-20	«Գերազանց»
13-17	«Լավ»
8-12	«Բավարար»

3.5. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը

- 3.5.1. Ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման որոշակի ժամանակահատվածի կամ ողջ շրջանի ընթացքում գրանցելու նպատակով յուրաքանչյուր ուսանողի համար լրացվում է *ակադեմիական տեղեկագիր*, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած արդյունարար գնահատականներն ըստ կրթական մոդուլների և կիսամյակների: Տեղեկագիրն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:
- 3.5.2. Ուսանողի վաստակած կրեդիտները նրա ուսումնառության ողջ շրջանում գրանցվում և կուտակվում են ակադեմիական տեղեկագրում:
- 3.5.3. Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածը ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները՝
- *գումարային կրեդիտներ,*
 - *գնահատված կրեդիտներ,*
 - *վարկանիշային միավորներ,*
 - *միջին որակական գնահատական:*
- 3.5.4. *Գումարային կրեդիտը (Գ)* կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած կրեդիտների գումարն է:
- 3.5.5. *Գնահատված կրեդիտը (ԳԿ)* գումարային կրեդիտի այն մասն է, որը գնահատված է թվային միավորներով.

$$ԳԿ = \sum \text{կրեդիտ}_i :$$

- 3.5.6. *Վարկանիշային միավորը (ՎՄ)* թվային միավորներով գնահատված դասընթացների (մոդուլների) կրեդիտների և դրանց արդյունարար գնահատականների արտադրյալների գումարն է.

$$\text{ՎՄ} = \sum \text{կրեդիտ}_i \times \text{Գ}_{\text{արդ}_i} ,$$

որտեղ $\text{Գ}_{\text{արդ}_i}$ -ը տվյալ ուսումնական մոդուլից ստացված արդյունարար գնահատականն է:

Օրինակ, եթե ուսանողը 5, 4 և 6 կրեդիտանոց դասընթացներից ստացել է համապատասխանաբար 12, 16 և 19 միավոր, ապա դասընթացների այդ խմբից ուսանողի վարկանիշային միավորն է՝

$$\text{ՎՄ} = 5 \times 12 + 4 \times 16 + 6 \times 19 = 238 \text{՝ } 300 \text{ հնարավորից } (5 \times 20 + 4 \times 20 + 6 \times 20):$$

3.5.7. Միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կրեդիտներով կշռված գնահատականների միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները գնահատված կրեդիտների գումարի վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 1/100-ի ճշտությամբ)։

$$\text{ՄՈԳ} = \frac{\text{ՎՄ}}{\text{ԳԿ}} :$$

Օրինակ, նախորդ դեպքում դիտարկված դասընթացների խմբի համար հաշվարկված միջին որակական գնահատականը կլինի՝ $\text{ՄՈԳ} = \frac{238}{15} = 15,87$ ՝ 20 հնարավորից։

3.5.8. Հաշվառվում և ակադեմիական տեղեկագրում գրանցվում են կիսամյակային (հաշվարկված առանձին կիսամյակի համար) և արդյունարար (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը։

4. Քննությունների վերահանձնումը և դասընթացի կրկնումը

- 4.1. Քննաշրջանի արդյունքներով դրական (8 և բարձր) միավոր ստացած ուսանողին տվյալ դասընթացը վերահանձնել չի թույլատրվում։
- 4.2. Եզրափակիչ գնահատումով դասընթացի դեպքում ընթացիկ քննություններից որևէ մեկին չներկայացած ուսանողին չի թույլատրվում այն վերահանձնել։
(4.2 կետը փոփոխվել է ԵՊՀ գիտական խորհրդի 06.07.2017 թ. թիվ 8/4 որոշմամբ)։
- 4.3. Առանց եզրափակիչ գնահատման դասընթացի դեպքում ընթացիկ քննություններից որևէ մեկին չներկայացած ուսանողը կարող է այն հանձնել լուծարքային շրջանում։
(4.3 կետը փոփոխվել է ԵՊՀ գիտական խորհրդի 06.07.2017 թ. թիվ 8/4 որոշմամբ)։
- 4.4. Առանց ընթացիկ գնահատման դասընթացի քննությանը կամ ստուգարքային դասընթացի ստուգարքին չներկայացած ուսանողը կարող է այն հանձնել լուծարքային շրջանում։
(4.4 կետը փոփոխվել է ԵՊՀ գիտական խորհրդի 06.07.2017 թ. թիվ 8/4 որոշմամբ)։
- 4.5. Ակադեմիական պարտքերի մարման կարգը սահմանվում է ԵՊՀ ռեկտորատի կողմից, և այդ ընթացքում ստուգարքների և/կամ քննությունների վերահանձնումը կազմակերպվում է միայն քննական հանձնաժողովներով, որոնք ձևավորվում են ռեկտորի հրամանով։
- 4.6. Եզրափակիչ գնահատումով դասընթացի գնահատման արդյունարար դրական նվազագույն միավորի՝ 8-ի շեմը չապահոված ուսանողն ակադեմիական պարտքերի մարման շրջանում պետք է վերահանձնի եզրափակիչ քննությունը՝ վերջինիս համար սահմանված 10 միավորի ձեռքբերման հնարավորությամբ։

Օրինակ, եթե ուսանողը դասընթացի համար նախատեսված 2 ընթացիկ քննություններից վաստակել է համապատասխանաբար 1 և 3 միավոր, իսկ եզրափակիչ քննությունից՝ 3 միավոր, ապա այդ դասընթացի արդյունարար գնահատականը կլինի՝ $\text{Գ}_{\text{արդ.}} = 1 + 3 + 3 = 7$, որը ցածր է նվազագույն (8 միավոր) շեմային պահանջից։ Այս դեպքում պահպանվում են միայն ընթացիկներից ստացած միավորները, այսինքն՝ 4, և պարտքերի մարման շրջանում ուսանողը վերահանձնում է միայն եզրափակիչ քննությունը՝ սահմանված 10 միավորի

ձեռքբերման հնարավորությամբ: Եթե ուսանողը պարտքերի մարման շրջանում չի հաղթահարում նվազագույն 8 միավորի շեմը, ապա տեղեկագրում նրա անվան դիմաց նշվում է նախորդ անբավարար միավորը, տվյալ օրինակի դեպքում՝ 7:

- 4.7. Առանց եզրափակիչ գնահատման դասընթացի գնահատման արդյունարար դրական նվազագույն միավորի շեմը չապահոված ուսանողն ակադեմիական պարտքերի մարման շրջանում ընթացիկ քննությունները պետք է վերահանձնի առանձին-առանձին (իր ցանկությամբ՝ մեկը կամ երկուսը) և կարող է վաստակել 8 և ավելի միավոր:

Օրինակ, եթե ուսանողը դասընթացի համար նախատեսված 2 ընթացիկ քննություններից վաստակել է համապատասխանաբար 2 և 3 միավոր, ապա այդ դասընթացի արդյունարար միավորը կլինի՝ $Q_{արդ.} = 2 + 3 = 5$, որը ցածր է նվազագույն (8 միավոր) շեմային պահանջից: Վերահանձնելով ընթացիկ քննություն(ներ)ը՝ ուսանողը կարող է վաստակել դրական նվազագույն 8 միավոր և ավելի: Եթե ուսանողը պարտքերի մարման շրջանում չի հաղթահարում դրական նվազագույն 8 միավորի շեմը, բայց բարձրացնում է գնահատականը, ապա տեղեկագրում նրա անվան դիմաց նշվում է նոր միավորը:

- 4.8. Առանց ընթացիկ գնահատման դասընթացի գնահատման արդյունարար դրական նվազագույն միավորի շեմը չապահոված ուսանողն ակադեմիական պարտքերի մարման շրջանում պետք է վերահանձնի ամբողջ դասընթացը և կարող է վաստակել 8 և ավելի միավոր:
- 4.9. Գնահատման վերոնշյալ կանոնները վերաբերում են նաև հեռակա ուսուցման համակարգին:
- 4.10. Բակալավրի կրթական ծրագրում ակադեմիական պարտքերի մարման շրջանից հետո, եթե առաջացած առարկայական պարտքերի կրեդիտների գումարը չի գերազանցում 12-ը, ապա համաձայն սահմանված կարգի՝ ուսանողը (բացառությամբ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով ընդունվածների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ՊՆ (կամ այլ ուժային կառույցների) պատվերով սովորող ուսանողների) կարող է առարկայական պարտքերը մարել մինչև ավարտական ուսումնական տարվա սկիզբը՝ վերահանձնելով առարկաները ևս 2 անգամ:
(4.10 կետը փոփոխվել է ԵՊՀ գիտական խորհրդի 11.04.2019 թ. թիվ 9/8.2 որոշմամբ):
- 4.11. Ակադեմիական պարտքերի մարման շրջանից հետո մագիստրոսի կրթական ծրագրում թույլատրվում է հանձնել մինչև 12 կրեդիտ առարկայական պարտք(եր)ը, եթե դասընթացի գնահատման արդյունարար միավորը 5-7 տիրույթում է, իսկ 4 և ցածր արդյունարար միավորի դեպքում ուսանողը հեռացվում է համալսարանից:
- 4.12. Քննաշրջանից և պարտքերի մարման յուրաքանչյուր շրջանից հետո ակադեմիական անբավարար առաջադիմություն ունեցող ուսանողների՝ համալսարանից հեռացման վերաբերյալ որոշումը կայացվում է ըստ ԵՊՀ ռեկտորատի սահմանած չափանիշների:
- 4.13. Մագիստրոսի կրթական ծրագրում մագիստրոսական թեզի պատրաստման կատարողականը ատեստավորվում է համապատասխան ուսումնական ստորաբաժանման կողմից:

մից՝ համաձայն ԵՊՀ-ում մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգի պահանջների:

4.14. Մագիստրոսական թեզի ատեստավորումը չանցած ուսանողը հեռացվում է համալսարանից ակադեմիական անբավարար առաջադիմության պատճառով: Հեռացված ուսանողը վերականգնումից հետո շարունակում է կատարել նախկինում հաստատված թեմայով մագիստրոսական թեզը:

5. Ուսանողի անձնական գործը և ուսումնական քարտը

5.1. Ուսանողի անձնական գործը նրա ողջ ուսումնառության ընթացքում դեկանատում պահվող հիմնական փաստաթղթերից է:

5.2. Բակալավրիատի ուսանողի անձնական գործի համար հիմք են ծառայում դիմորդի կողմից ընդունող հանձնաժողովին հանձնված փաստաթղթերը՝ կրթության վկայականը (բնօրինակ), ընդունելության դիմում-հայտը, 3x4 չափսի լուսանկարները, կենտրոնացված և ներբուհական քննությունների դեպքում՝ համապատասխան հիմքերը, ընդհանուր մրցույթից դուրս ընդունվածների համապատասխան փաստաթղթերը: Բացի այդ, ուսանողի անձնական գործում դեկանատը պետք է ներառի.

- համալսարանի և ուսանողի միջև կնքված պայմանագիրը, որը պետք է համարակալվի ստուգման գրքույկի համարով,
- վճարովի համակարգում սովորող ուսանողի՝ բոլոր կիսամյակների ուսման վարձի վճարման կտրոնները,
- ուսանողին վերաբերող դիմումները, գրությունները և համալսարանական ու ֆակուլտետային բոլոր հրամանները,
- ընդունելության միասնական քննությունների արդյունքների մասին վկայականը, որը համալսարան ընդունված դիմորդը ներկայացնում է սեպտեմբերի առաջին շաբաթվա ընթացքում:

5.3. Մագիստրատուրայի ուսանողի անձնական գործի համար հիմք են ծառայում դիմորդի կողմից ընդունող հանձնաժողովին հանձնված փաստաթղթերը՝ բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմի և դրա հավելվածի պատճենները, ընդունելության դիմում-հայտը, 3x4 չափսի լուսանկարները: Նշվածներից բացի՝ ուսանողի անձնական գործում դեկանատը պետք է ներառի.

- համալսարանի և ուսանողի միջև կնքված պայմանագիրը, որը պետք է համարակալվի ստուգման գրքույկի համարով,
- վճարովի համակարգում սովորող ուսանողի՝ բոլոր կիսամյակների ուսման վարձի վճարման կտրոնները,
- ուսանողին վերաբերող դիմումները, գրությունները և համալսարանական ու ֆակուլտետային բոլոր հրամանները:

5.4. Համալսարանն ավարտելուց հետո ուսանողի անձնական գործն ամբողջությամբ՝ ներառյալ ստուգման գրքույկը, շրջանցիկ թերթիկը, դիպլոմի և դրա հավելվածի պատճենները և ավարտման հրամանը, հանձնվում է ԵՊՀ արխիվ:

5.5. Ուսանողի հետ պայմանագիրը կնքելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, ուսումնական էլեկտրոնային քարտում ֆակուլտետի դեկանատի կողմից մուտքագրվում են ուսանողի անձնական տվյալները, նրան վերաբերող բոլոր հրամանները, և տեղադրվում է նրա լուսանկարը: Ուսանողի քննաշրջանի արդյունքները քննաշրջանից հետո ուղարկվում են ուսանողի համալսարանական էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Դասընթացների տեղեկագիրքը

6.1. Համալսարանը յուրաքանչյուր ուստարվա համար հրապարակում է *ԵՊՀ դասընթացների տեղեկագիրք*, որը տեղադրվում է համալսարանի կայքէջում:

6.2. *Դասընթացների տեղեկագիրքը* նախատեսված է համալսարանում իրականացվող կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին, ինչպես նաև լայն հանրությանը մատչելի դարձնելու համար և պարունակում է.

ա) առաջարկվող կրթական ծրագրերը, ուսումնական գործընթացի ժամանակացույցը և «Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը»,

բ) տեղեկություն կրթական ծրագրերի վերաբերյալ.

– ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, մուտքի շեմային պահանջները, ծրագրի նպատակները և նախանշված կրթական վերջնարդյունքները, կրթությունը շարունակելու հնարավորությունները, ծրագրի ընդհանուր կառուցվածքը և բովանդակությունը, քննական կանոնները և գնահատման կարգը, ամփոփիչ ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,

– առանձին դասընթացի նկարագրությունը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները (ներառյալ շաբաթական լսարանային ժամաքանակներն ըստ պարապմունքի ձևերի), դասընթացի նպատակը և կրթական վերջնարդյունքները՝ արտահայտված կրթական մասնագիտական և ընդհանրական գիտելիքներով, կարողություններով և հմտություններով, դասընթացի համառոտագիրը (հակիրճ բովանդակությունը/թեմաները), դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներն ու չափանիշները:

7. Առցանց դասընթացի կազմակերպումը

7.1. ԵՊՀ կրթական ծրագրերում առանձին դասընթացներ ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ և ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի արտոնությամբ կարող են կազմակերպվել առցանց եղանակով:

7.2. Առցանց և լսարանային եղանակներով իրականացվող դասընթացների բովանդակությունը, ինչպես նաև կրթական վերջնարդյունքները պետք է լինեն նույնը:

7.3. Առցանց եղանակով նախատեսվող դասընթացի նյութը պատրաստում է իրականացնող ամբիոնը և ներկայացնում ֆակուլտետի մեթոդական խորհրդին՝ երաշխավորություն ստանալու համար:

- 7.4. Առցանց ուսուցման էլեկտրոնային միջավայրի տեխնիկական ապահովումը և վերահսկողությունն իրականացնում են ԵՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական (այսուհետև՝ ՏՏԿՀ) կենտրոնը և տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչությունը:
- 7.5. Յուրաքանչյուր կիսամյակի սկզբում առցանց դասընթացներ իրականացնող ամբիոնը ՏՏԿՀ կենտրոնին ներկայացնում է դրանց անվանումները, դասախոսներին և ընդգրկված ուսանողներին, որի հիման վրա ՏՏԿՀ կենտրոնն ապահովում է առցանց միջավայր:
- 7.6. Առցանց դասընթացը վարող դասախոսը վերահսկում է ուսանողների մասնակցությունը, տրամադրում և շարունակաբար թարմացնում է էլեկտրոնային ուսումնական նյութերը, առցանց կապի մեջ է լինում ուսանողների հետ, կազմակերպում է քննարկումներ և սեմինարներ:
- 7.7. Ուսանողները ստանում են տեխնիկական աջակցություն էլեկտրոնային փոստով կամ էլեկտրոնային կապի այլ միջոցներով:

8. Պրակտիկայի կազմակերպումը

- 8.1. Պրակտիկան ուսանողի մասնագիտական կրթության կարևոր և անբաժանելի բաղադրիչներից է, որը նպատակաուղղված է ուսումնառության ընթացքում ստացած գիտելիքների գործնական կիրառության հմտությունների զարգացմանը:
- 8.2. Բակալավրի կրթական ծրագրով սովորող ուսանողները, մասնագիտությամբ պայմանավորված, կարող են անցնել հետևյալ պրակտիկաներից մի քանիսը՝ ուսումնական (ճանաչողական, դաշտային, էքսկուրսիոն, թանգարանային և այլն), մասնագիտական (արտադրական, գիտահետազոտական, փորձարարական), մանկավարժական, իսկ մագիստրոսի կրթական ծրագրում ընդգրկված ուսանողները՝ միայն մասնագիտական պրակտիկա:
- 8.3. Ուսումնական պրակտիկան կազմակերպվում է բակալավրիատի 1-ին և 2-րդ կուրսերի ուսանողների համար, որի նպատակն է ամրապնդել և խորացնել ուսանողի ընդհանուր մասնագիտական գիտելիքները:
- 8.4. Մասնագիտական պրակտիկայի նպատակն է զարգացնել ուսանողների նեղ մասնագիտական հմտությունները:
- 8.5. Պրակտիկայի տեսակը, տևողությունը և ժամկետները սահմանվում են համապատասխան կրթական ծրագրով:
- 8.6. Պրակտիկան կազմակերպվում և վերահսկվում է ուսումնամեթոդական վարչության կողմից՝ պրակտիկայի ծրագրի և ժամանակացույցի համաձայն, համապատասխան մասնագիտական կրթական ծրագիրն իրականացնող ֆակուլտետի (ինստիտուտի, կենտրոնի) պրակտիկայի պատասխանատու(ներ)ի հետ համատեղ:
- 8.7. Պրակտիկայի ամբողջ ընթացքն արձանագրվում է ուսանողի օրագրում: Պրակտիկայի ավարտին այն իրականացնող հաստատության պատասխանատու անձը օրագրում ներկայացնում է կարծիք և բնութագիր: Օրագիրը կցվում է ուսանողի անձնական գործին:
- 8.8. Մասնագիտությամբ աշխատող ուսանողը ազատվում է մասնագիտական պրակտիկայից՝ աշխատանքի վայրից ներկայացնելով համապատասխան տեղեկանք:

8.9. Պրակտիկան գնահատվում է ստուգարքի ձևով: Պրակտիկայի ղեկավարը «Ստուգված» նշում է այն դեպքում, եթե ուսանողը մասնակցել է պրակտիկային և կատարել է առաջադրանքները:

9. Կուրսային աշխատանքի պատրաստումը և գնահատումը

9.1. Կուրսային աշխատանքը նպատակաուղղված է դասընթացի կամ դասընթացների խմբի ուսումնասիրության արդյունքում ուսանողի ստացած գիտելիքների կիրառության հմտությունների ձևավորմանը և զարգացմանը:

9.2. Կուրսային աշխատանքի թեման և ղեկավարին հաստատում է ամբիոնը կիսամյակի առաջին երկու շաբաթվա ընթացքում և տեղեկացնում ուսանողներին:

9.3. Թեմայի հաստատումից հետո մեկշաբաթյա ժամկետում կուրսային աշխատանքի ղեկավարը ուսանողի հետ կազմում է առաջադրանքը և նրան տրամադրում համապատասխան գրականության ցանկը:

9.4. Կուրսային աշխատանքի ղեկավարը կանոնավոր խորհրդատվությունների ժամանակացույցը ներկայացնում է ամբիոն և տեղեկացնում ուսանողներին:

9.5. Ուսանողը ավարտած կուրսային աշխատանքը (տպագիր և էլեկտրոնային) ամբիոն է ներկայացնում պաշտպանությունից առնվազն 7 օր առաջ:

9.6. Կուրսային աշխատանքի պաշտպանությունն իրականացվում է առնվազն երկու դասախոսից (որոնցից մեկը կուրսային աշխատանքի ղեկավարն է) կազմված հանձնաժողովում:

9.7. Պաշտպանության ժամանակ գրագոյության հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է «անբավարար»:

9.8. Գնահատականի վերաբերյալ անհամաձայնության դեպքում ուսանողը նույն օրը գրավոր դիմում է ամբիոնի վարիչին:

10. Կամրնտրական դասընթացների ընտրության ընթացակարգը

10.1. Բակլավարի կրթական ծրագրի կամրնտրական դասընթացներ են նախատեսվում *ընդհանուր կրթական* և *մասնագիտական* կառուցամասերում:

10.2. Ընդհանուր կրթական կառուցամասի կամրնտրական դասընթացների ցանկից ուսանողն ընտրում է երկուսը:

10.3. Մագիստրոսի կրթական ծրագրի կամրնտրական դասընթացները նախատեսվում են մասնագիտացման դասընթացների կրթամասում, որոնցից ուսանողն ընտրում է հինգը:

10.4. Կամրնտրական դասընթացներին ուսանողները գրանցվում են ֆակուլտետում, և արդյունքները սահմանված ժամկետում ներկայացվում են ուսումնամեթոդական վարչություն:

10.5. Կամրնտրական դասընթացներին ուսանողների գրանցումը կատարվում է նախորդող ուստարում՝ մինչև ապրիլի 1-ը: Սահմանված վերջնաժամկետից հետո գրանցումներ չեն կատարվում:

10.6. Համալսարանը կարող է չեղարկել ցանկացած կամընտրական դասընթացի իրականացումը, եթե դրանում ընդգրկված չեն բավարար թվով ուսանողներ՝ ըստ սահմանված նորմերի:

11. Կրթական ծրագրի ղեկավարը

11.1. Կրթական ծրագրի պատշաճ մշակման, իրականացման, մշտադիտարկման և վերանայման նպատակով նախատեսված են կրթական ծրագրի ղեկավարի գործառույթներ:

11.2. Կրթական ծրագրի ղեկավարը կազմում է նոր կրթական ծրագրի մշակման հայտ, որով հիմնավորում է ծրագրի ներդրման և հետագա իրականացման անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը:

11.3. Կրթական ծրագրի ղեկավարը ծրագիրը մշակող աշխատանքային խմբի հետ ձևակերպում է ծրագրի նպատակներն ու վերջնարդյունքները՝ որակավորումների ազգային շրջանակի և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:

11.4. Կրթական ծրագրի ղեկավարը կազմակերպում է ծրագրի փաստաթղթային փաթեթի մշակման գործընթացը, որին մասնակից է դարձնում նաև գործատուներին և արտաքին այլ շահակիցներին:

11.5. Կրթական ծրագրի ղեկավարը ապահովում է ծրագրի հրապարակայնությունն ու մասնագիտական կողմնորոշման աշխատանքները:

11.6. Կրթական ծրագրի ղեկավարը ֆակուլտետի (ինստիտուտի, կենտրոնի) ղեկավարության հետ միասին կրթական ծրագիրը նախապատրաստում է հավատարմագրման:

11.7. Կրթական ծրագրի ղեկավարը չի կարող ղեկավարել նույն կրթական մակարդակի մեկից ավելի կրթական ծրագրեր:

12. Ուսումնական խորհրդատուն (կուրսատորը)

12.1. Առաջին կուրսի ուսանողներին ուսումնառության ընթացքում օժանդակելու նպատակով նշանակվում են ուսումնական խորհրդատուներ, որոնք ֆակուլտետի փորձառու դասախոսներ են:

12.2. Ուսումնական խորհրդատուների թիվը սահմանում է ֆակուլտետը՝ 30 ուսանողի համար նախատեսելով մեկ խորհրդատու:

12.3. Ուսումնական խորհրդատուն ուսանողներին ծանոթացնում է իրենց իրավունքներին և պարտականություններին, համալսարանում գործող և առաջին հերթին ուսանողներին առնչվող կանոնակարգերին և կարգերին (ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման, ԵՊՀ ներքին կարգապահական, ԵՊՀ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման և այլն), ուսանողի ուղեցույցին, գրադարանից օգտվելու կանոններին և այլն:

12.4. Ուսումնական խորհրդատուն ծանոթանում է ուսանողների սոցիալ-կենցաղային պայմաններին, վերահսկում նրանց ուսումնական առաջընթացը, օգնում նրանց՝ հաղթահարելու ուսման ընթացքում ծագած դժվարությունները, ուսումնական գործընթացի հետ

կապված տարաբնույթ հարցերի շուրջ նրանց համար կազմակերպում խորհրդատվություններ:

12.5. Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին ֆակուլտետի գիտական խորհուրդը լսում և գնահատում է ուսումնական խորհրդատուների հաշվետվությունները:

13. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները

13.1. Ուսանողն իրավունք ունի՝

- սահմանված կարգով ցանկացած կրթական մակարդակում ընդհատելու կամ շարունակելու մասնագիտական կրթությունը,
- սահմանված կարգով վերականգնելու ընդհատած ուսանողական իրավունքները ԵՊՀ-ում,
- մասնակցելու ուսուցման որակն ապահովող գործառույթներին և գնահատելու պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը,
- բացի ընտրած մասնագիտության ուսումնական դասընթացներից՝ յուրացնելու ուսումնական ցանկացած այլ դասընթաց (արտածրագրային), որը դասավանդվում է ԵՊՀ-ում՝ ըստ սահմանված կարգի,
- հիմնական մասնագիտական ուսուցումը համատեղելու երկրորդ մասնագիտական (զուգահեռ) ուսուցման հետ և ստանալու երկրորդ որակավորման աստիճան,
- օգտվելու ԵՊՀ գրադարանից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական, գիտական, բուժական, մարզական, առողջարանային, ուսումնաարտադրական և այլ ստորաբաժանումների ծառայություններից,
- ըստ նախասիրությունների՝ մասնակցելու ԵՊՀ-ում անցկացվող ուսանողական գիտահետազոտական աշխատանքներին, սեմինարներին և գիտաժողովներին,
- լիազորված մարմնի սահմանած կարգով, անհրաժեշտության դեպքում, ստանալու ակադեմիական արձակուրդ՝ մինչև մեկ տարի ժամկետով, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի,
- սահմանված կարգով փոխադրվելու մեկ այլ բուհ (ներառյալ՝ օտարերկրյա պետությունների բուհերը) կամ փոխելու մասնագիտությունը,
- միջբուհական փոխանակման և/կամ ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակներում ուսումնառության որոշակի շրջան (կիսամյակ, ուստարի) ուսումնառելու այլ բուհում (ներառյալ՝ օտարերկրյա),
- ստանալու իր ակադեմիական տեղեկագիրը՝ ուսումնառության տվյալ կամ ամբողջ ժամանակահատվածի համար,
- ավարտական փաստաթղթի (դիպլոմի) հետ միասին անվճար ստանալու համաեվրոպական նմուշի երկլեզու դիպլոմի հավելվածը:

13.2. Ուսանողը պարտավոր է՝

- ծանոթանալ սույն կարգին և հետևել դրա պահանջներին,
- կատարել դասընթացների և քննությունների համար սահմանված պահանջները,
- հաճախել իր կրթական ծրագրում ընդգրկված բոլոր դասընթացներին,

- սահմանված ժամկետներում կատարել բոլոր ուսումնական առաջադրանքները,
- վճարովի հիմունքներով կրթություն ստանալու դեպքում ժամանակին վճարել ուսման վարձավճարը,
- հոգատար վերաբերվել ԵՊՀ գույքին,
- կատարել սույն կարգով, ԵՊՀ կանոնադրությամբ և ԵՊՀ ներքին իրավական այլ ակտերով սահմանված ուսանողի պարտականությունները:

II ԲԱԺԻՆ

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնը մագիստրոսի կրթական մակարդակում կազմակերպում է ուսուցում՝ հետևյալ ծրագրերով.

- 1.«Կրթության կազմակերպում»
2. «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա»

1. Կրթության կազմակերպում

նշել ծրագրի անվանումը

Ծ Ր Ա Գ Ր Ի Մ Ա Ս Ն Ա Գ Ի Ր

1. Ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը	Կրթության կազմակերպում 011102.04.07
2. Բուհը	Երևանի պետական համալսարան
3. Ծրագիրը հավատարմագրված է	
4. Շնորհվող որակավորումը	Կրթության մագիստրոս
5. Ծրագրի մեկնարկի ուսումնական տարին	2006-2007թթ.
6. Ուսումնառության լեզուն	հայերեն
7. Ուսուցման ձևը	հեռակա

8. Ծրագրի ընդունելության չափանիշները/պահանջները.
Մագիստրոսական ծրագրում ընդունելությունն անցկացվում է բանավոր քննության ձևաչափով՝ ընդհանուր մանկավարժությունից:

9. Ծրագրի նպատակները.

Ծրագրի նպատակն է.

- պատրաստել կրթության կազմակերպիչներ հանրակրթության կառավարման համակարգում՝ ուսումնադաստիարակչական աշխատանքներն արդյունավետ կառավարելու համար:
- պատրաստել կրթության կազմակերպիչներ բարձրագույն կրթության կառավարման համակարգում՝ միջազգային չափանիշներին համապատասխան որակյալ, առաջանցիկ կրթություն ապահովելու համար:

10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները

ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

Ա1. ներկայացնել կրթության կառավարման տեսություններում ներառված այն հիմնարար գաղափարները, որոնք հիմք են հանդիսանում արդյունավետ կառավարման և պլանավորման համար,

Ա2. սահմանել կառավարման սկզբունքները, գործառույթները, մեթոդները և հաղորդակցման ոճերը, էթիկայի նորմերը՝ վերարտադրելով կառավարման փորձեր իրողություններ,

Ա3. կանխատեսել այն դժվարությունները, որոնք կարող են ծագել ուսումնական ծրագրերի կազմման, պլանավորման, կառավարման գործընթացում և փալ համապատասխան լուծումներ,

Ա4. ճանաչել և քննարկել կրթության կառավարչական գործընթացները, դրանցում եղած գործոնները՝ ներկայացնելով փորձեր երկրների փորձը,

Ա5. հիմնավորել կրթության կառավարման արդյունավետության հարցում
կրթության բարձր որակի ապահովման խնդիրը՝ կանխատեսելով կրթության
ուլորտի առջև ծառայած մարտահրավերները կրթական քաղաքականության
պլանավորման և իրականացման արդյունքում,

Ա6. կրթության արդյունավետ կառավարման համակարգում կարևորել կրթության
ներքին և արտաքին որակի ապահովման և վերահսկողության
հարաբերակցությունը:

բ. Գործնական մասնագիտական կարողություններ

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

Բ1. աղյուսավետ կիրառել կրթության կառավարման մեթոդներն ու միջոցները՝
հաշվի առնելով կառավարման իրավիճակային մոտեցման տեսությունը
հանրակրթության և բարձրագույն կրթության համակարգերում,

Բ2. կանխատեսել և վերլուծել այն դժվարությունները, որոնք կարող են ծագել
կառավարման գործընթացում, փալ համապատասխան լուծումներ՝ հաշվի
առնելով ռիսկերը,

Բ3. վերլուծել կրթական քաղաքականության իրականացման արդյունավետ
մեխանիզմները, գնահատման ժամանակակից միջոցներ,

Բ4. ճիշտ արժևորել և գնահատել կոլեկտիվի անդամների ներուժը, առկա
խնդիրները և ըստ այդմ էլ իրականացնել կառույցի աշխատանքների
պլանավորման, կազմակերպման, վերահսկման, կարգավորման և
կոորդինացման գործառույթներ,

Բ5. կազմել և գործնականում կիրառել կրթական հետազոտությունների
իրականացման տարատեսակ գործիքակազմեր:

գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի

- Գ1. արդյունավետ պլանավորել ժամանակն ու ռեսուրսները կրթության կառավարման գործում,
- Գ2. կիրառել սրացած գիտելիքները պրակտիկ գործունեության մեջ,
- Գ3. հաղորդակցվել օտար լեզվով մասնագիտական ոլորտում,
- Գ4. կիրառել SCS-ները մասնագիտական խնդիրներում:

11. Ծրագրի ուսումնական պլանը

Կցված է

12. Ուսումնական պլանի քարտեզը

Կցված է

13. Գնահատման ձևերը

Ծրագրի յուրաքանչյուր դասընթացի գնահատման համար նախատեսվում է անցկացնել երկու ընթացիկ և մեկ եզրափակիչ քննություն:

Մասնագիտական ծրագրի ավարտին ներկայացվում է պաշտպանության մագիստրոսական հետազոտություն (թեզ):

14. Շրջանավարտների ապագա կարիերայի հնարավորությունները

- կրթական ծրագրի շրջանավարտները կարող են աշխատել կրթության կազմակերպիչներ հանրակրթության ոլորտում,
- կրթական ծրագրի շրջանավարտները կարող են աշխատել կրթության կազմակերպիչներ բարձրագույն կրթության ոլորտներում:

15. Ուսումնառության օժանդակության ռեսուրսները և ձևերը

Դասընթացների վերաբերյալ մասնագիտական գրականություն, էլեկտրոնային դասսախոսությունների փաթեթներ, ուսումնական թղթապանակներ, սլայդներ, ուսումնական ձեռնարկներ:

16. Կրթական չափորոշիչները կամ ծրագրային կողմնորոշիչները, որոնք օգտագործվել են ծրագիրը մշակելիս

Մասնագիտական կրթական ծրագիրը մշակելիս օգտագործվել են հետևյալ կրթական չափորոշիչները կամ կողմնորոշիչները.

- ՀՀ որակավորումների ազգային շրջանակը՝ հաստատված ՀՀ

կառավարության 2016թ. հուլիսի 7-ի N714-ն որոշմամբ,

- Երևանի պետական համալսարանի մագիստրոսի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը՝ հաստատված 2016 թ.-ին ԵՊՀ գիտական խորհրդում,
- Երևանի պետական համալսարանի առկա/հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի 2016/2017 ուսարվա ընդունելության կանոնակարգ՝ հաստատված ԵՊՀ գիտական խորհրդի 2015թ. մարտի 31-ի նիստի N° 6/5 որոշմամբ:

17. Լրացուցիչ տեղեկատվություն ծրագրի վերաբերյալ

Առաջիկայում նախատեսվում է կազմակերպել <<Կրթության կազմակերպում>> մագիստրոսական կրթական ծրագրի հեռավար ուսուցում:

Ծրագրի կրթական վերջնարդյունքները

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն	Բ. Գործնական մասնագիտական կարողություններ
Ա1. ներկայացնել կրթության կառավարման տեսություններում ներառված այն հիմնարար գաղափարները, որոնք հիմք են հանդիսանում արդյունավետ կառավարման և պլանավորման համար	Բ1. աղյունավետ կիրառել կրթության կառավարման մեթոդներն ու միջոցները՝ հաշվի առնելով կառավարման իրավիճակային մոտեցման տեսությունը հանրակրթության և բարձրագույն կրթության համակարգերում
Ա2. սահմանել կառավարման սկզբունքները, գործառույթները, մեթոդները և հաղորդակցման ոճերը, էթիկայի նորմերը՝ վերարտադրելով կառավարման տարրեր իրողություններ	Բ2. կանխատեսել և վերլուծել այն դժվարությունները, որոնք կարող են ծագել կառավարման գործընթացում, տալ համապատասխան լուծումներ՝ հաշվի առնելով ռիսկերը,
Ա3. կանխատեսել այն դժվարությունները, որոնք կարող են ծագել ուսումնական ծրագրերի կազմման, պլանավորման, կառավարման գործընթացում և տալ համապատասխան լուծումներ	Բ3. վերլուծել կրթական քաղաքականության իրականացման արդյունավետ մեխանիզմները, գնահատման ժամանակակից միջոցներ,
Ա4. ճանաչել և քննարկել կրթության կառավարչական գործընթացները, դրանցում եղած գործոնները՝	Բ4. ճիշտ արժևորել և գնահատել կոլեկտիվի անդամների ներուժը, առկա խնդիրները և

	ներկայացնելով փարբեր երկրների փորձը		ըստ այդմ էլ իրականացնել կառույցի աշխատանքների պլանավորման, կազմակերպման, վերահսկման, կարգավորման և կոորդինացման գործառույթներ,
Ա5.	հիմնավորել կրթության կառավարման արդյունավետության հարցում կրթության բարձր որակի ապահովման խնդիրը՝ կանխատեսելով կրթության ոլորտի առջև ծառայած մարտահրավերները կրթական քաղաքականության պլանավորման և իրականացման արդյունքում	Բ5.	կազմել և գործնականում կիրառել կրթական հեղափոխությունների իրականացման տարատեսակ գործիքակազմեր:
Ա6.	կրթության արդյունավետ կառավարման համակարգում կարևորել կրթության ներքին և արտաքին որակի ապահովման և վերահսկողության հարաբերակցությունը:		
Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ			
Գ1.	արդյունավետ պլանավորել ժամանակն ու ռեսուրսները կրթության կառավարման գործում		
Գ2.	կիրառել ստացած գիտելիքները պրակտիկ գործունեության մեջ		
Գ3.	հաղորդակցվել օտար լեզվով մասնագիտական ոլորտում		
Գ4.	կիրառել SCS-ները մասնագիտական խնդիրներում		

Ուսումնական մոդուլի անվանումը	Մոդուլի թվանիշը	ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ														
		Ա1	Ա2	Ա3	Ա4	Ա5	Ա6	Բ1	Բ2	Բ3	Բ4	Բ5	Գ1	Գ2	Գ3	Գ4
Օտար լեզու-1																
Օտար լեզու-2																
Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական ոլորտում																X
Հետազոտության պլանավորում և մեթոդներ	1405/Մ01											X		X		X
Մասնագիտության արդի հիմնախնդիրները	1405/Մ02	X			X						X			X		
ՀՀ կրթության օրենսդրություն	1405/Մ03										X			X		
Կառավարման տեսություններ	1405/Մ04	X				X		X								
Կրթության կառավարման հիմունքներ	1405/Մ05	X	X		X			X	X							
Բարձրագույն կրթության պլանավորում	1405/Մ06			X		X						X				
Հանրակրթության և պլանավորում	1405/Մ07			X		X						X				
Կրթության որակի ապահովում և վերահսկողություն	1405/Մ08					X	X		X							
Ուսումնական գործընթացի կազմակերպումը բուհում	1405/Մ09															
Ուսումնադաստիարակչական գործընթացի կազմ. հանրակրթ. դպրոցում	1405/Մ10			X				X				X		X		
Կրթական քաղաքականություն և ռազմավարություն	1405/Մ11					X					X			X		
Մարդկային ռեսուրսների կառավարում	1405/Մ12											X			X	
Կառավարման հոգեբանություն	1405/Մ13				X							X			X	
Կրթության փիլիսոփայություն	1405/Մ14												X	X		
Կրթության ֆինանսավորում	1405/Մ15			X						X			X			

Ուսումնական ծրագրերի կազմման սկզբունքներ	1405/Մ16			X							X			X			
Կրթական հետազոտությունների գնահատում	1405/Մ17								X			X	X				
Նախագծերի կառավարում	1405/Մ18																
Դասական և ժմկ-կից գնահատման և թեստավորման տեսություններ	1405/Մ19									X				X	X		

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐ

1602/Մ01. Անգլերեն

Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացին պատասկնէ ուսուցանել ակադեմիական անգլերեն (Academic English),

հումանիտար, սոց. գիտությունների, ինչպես նաև տեխնիկական ֆակուլտետներում:

Կրթականարդյունքները.

Դասընթացի հաջողավարտին ուսանողը.

1. կտիրապետի գրավոր և բանավոր խոսքին՝ գիտական աշխարհի հետ ազատ շփվելու համար:

2. կկարողանա մասնագիտական երկխոսության մեջ մտնել օտարերկրացի գործընկերների հետ:

3. կկարողանա պատշաճ մակարդակով մասնագիտական զեկուցում պատրաստել և մասնակցել միջազգային գիտոժողովներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Գիտական գրավոր խոսքի զարգացում, համառոտագրության ուսուցում (Abstract writing): *Թեմա 2.* Միջազգային գիտաժողովների համար զեկուցում պատրաստելու հիմնական դրույթները: *Թեմա 3.* Գիտական բանավեճին մասնակցելու տեխնիկայի ուսուցում (Scientific discussion):

Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա:

2. Ընդհանուր պարտադիր դասընթացներ

2301/Մ00. Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական ոլորտում(3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի հիմնական նպատակն է ուսանողներին հաղորդել մասնագիտական գիտելիքներ տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում և ծանոթացնել ուսանողներին նոր ծրագրերին իրենց մասնագիտական հետաքրքրությունների շրջանակներում:

Կրթականարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պիտի կարողանա վարժ աշխատել տեքստային փաստաթղթերի հետ, փոփոխել տպիչի և համակարգչի այլ ակսեսուարների պարամետրները, վարժ կատարել տարբեր գործողություններ էլեկտրոնային աղյուսակների հետ, կազմել դիագրամներ և գրաֆիկներ, կատարել հաշվարկներ, օգտագործելով բանաձևերը, նախագծել և ստեղծել տվյալների բազան, ինչպես նաև կազմակերպել տարբեր հարցումներ, ստեղծել հաշվետվություններ, ստեղծել պարզագույն web-կայքերը, օգտագործելով HTML լեզուն:

Դասընթացի բովանդակությունը.

Թեմա 1. Windows օպերացիոն համակարգը, համակարգչի ակսեսուարներ, նրանց պարամետրները: *Թեմա 2.* Microsoft Excel ծրագրի խորացված ուսուցում, ֆիլտրներ, գրաֆիկներ, ֆունկցիաներ: *Թեմա 3.* Microsoft Access ծրագրի ուսուցում, տվյալների բազայի

ստեղծում, աղյուսակների փոփոխում, կապերի ստեղծում, մեկ և մեկից ավելի աղյուսակներում օգտագործվող հարցումներ, ձևերի և հաշվետվությունների ստեղծում: *Թեմա 4.* HTML փաստաթղթի ստեղծումը, կառուցվածքը, հիմնական դրույթները և տեգերը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներն անցկացվում են համակարգչի վրա, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով:

2801/Մ01	1. Մասնագիտության արդի հիմնախնդիրները	2. 3 կրեդիտ
3. 2 ժամ/շաբաթ	4. 10 ժամ դասախոսություն	
5. առաջին կիսամյակ	6. Ստուգարք	
<p>7. Դասընթացի նպատակն է</p> <ul style="list-style-type: none"> • սովորողներին ներկայացնել մասնագիտության ժամանակակից հիմնախնդիրները, • ծանոթացնել ուսուցման, դաստիարակության և կառավարման ժամանակակից մոտեցումները: 		
<p>8. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ul style="list-style-type: none"> • սահմանել մասնագիտության հիմնական հասկացությունները, նպատակը, խնդիրները, • հիմնավորել կրթության արդի հիմնախնդիրների վերաբերյալ ժամանակակից մոտեցումները, • վերլուծել կրթության զարգացման ուղիները, • որոշարկել կրթական նոր հարացույցների դերը գիտության զարգացման գործում: <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ul style="list-style-type: none"> • վերլուծել կրթության կառավարման արդի հիմնախնդիրները և համադրել նորովի մոտեցումների հետ, • գիտահետազոտական գործունեության ընթացքում կիրառել ուսումնառությամբ ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները, • գնահատել մասնագիտության արդյունավետությունն ապահովող գործիքակազմը կրթության կառավարման համակարգում <p>գ. ընդհանրական (փոխանցելի) կարողություններ.</p> <ul style="list-style-type: none"> • վերլուծել կրթության արդի հիմնախնդիրները, • բացահայտել կառավարման հիմնարար գաղափարները մասնագիտական 		

գործունեության ընթացքում:		
<p>9. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</p> <ul style="list-style-type: none"> - ներկայացնել կրթության կառավարման տեսություններում ներառված այն հիմնարար գաղափարները, որոնք հիմք են հանդիսանում արդյունավետ կառավարման և պլանավորման համար, - ճանաչել և քննարկել կրթության կառավարչական գործընթացները, դրանցում եղած գործոնները՝ ներկայացնելով տարբեր երկրների փորձը, - վերլուծել կրթական քաղաքականության իրականացման արդյունավետ մեխանիզմները <p>-կիրառել ստացած գիտելիքները պրակտիկ գործունեության մեջ:</p>		
<p>10. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ul style="list-style-type: none"> • դասախոսություն՝ շարժասահիկների ուղեկցությամբ • ռեֆերատների ներկայացում շարժասահիկներով: 		
<p>11. Գնահատման մեթոդները և չափանիշները.</p> <p><i>Ստուգումն</i> իրականացվում է գործնական ներկայացման միջոցով: Սովորողները, նախապես ընտրված թեմաներից, ներկայացնում են ռեֆերատներ՝ շարժասահիկների ուղեկցությամբ:</p>		
<p>12. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <ul style="list-style-type: none"> • Մանկավարժության ընդհանուր հիմունքները: • Մանկավարժության սկզբունքները: • Մանկավարժության հասկացությունները: • Կրթական բարեփոխումները: • Կրթության կառավարման առանձնահատկությունները: • Կրթության զարգացման ուղիները: • Դիդակտիկա, հասկացությունները: • Ուսուցման կազմակերպման ձևերը: 		

2801/Մ02	« Կրթության օրենսդրություն	13. 3 կրեդիտ
2 ժամ/շաբաթ	10 ժամ դասախոսություն	

Առաջին կիսամյակ	Հանրագումարային
<p>Դասընթացի նպատակն է</p> <ul style="list-style-type: none"> • սովորողներին ներկայացնել կրթության օրենսդրության բազային հասկացություններն ու կատեգորիաները, ՀՀ կրթության բնագավառը կարգավորող օրենսդրությունը, • զարգացնել սովորողների մոտ կրթական իրավահարաբերությունների նկատմամբ հետազոտական և վերլուծական գործիմացություն: 	
<p>Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ul style="list-style-type: none"> • սահմանել կրթության օրենսդրության հիմնական գաղափարներն ու կատեգորիաները, • իմանալ կրթական գործընթացի մասնակիցների իրավունքները, կրթության ոլորտի միջազգային իրավական ստանդարտները (Բոլոնյան գործընթաց), • կարողանալ լուծում տալ կրթական գործընթացի մասնակիցների իրավահարաբերություններին վերաբերող խնդիրների, • նկարագրել օրենսդրության կարգավորող նշանակությունը հասարակական հարաբերություններում, • բացատրել կրթության օրենսդրության ազդեցությունը ուսումնական հաստատությունների ուսումնադաստիարակչական գործընթացում որակի ապահովման վրա, <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ul style="list-style-type: none"> • կազմել կրթական հեղափոխությունների իրականացման պլան, համապատասխան հարցարաններ և հարցաթերթիկներ, • կիրառել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները (Arlis.am) ուսումնական հաստատությունների ուսումնադաստիարակչական գործընթացում որակի ապահովման համար, • փորձարկել, վերլուծել, ընդհանրացնել հեղափոխության ընթացքում ձեռք բերված տեղեկատվությունը՝ կիրառելով կրթության բնագավառը կարգավորող օրենսդրությունը: 	

<p>14. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</p> <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնել ՀՀ կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության մեջ ներառված այն հիմնարար գաղափարները, որոնք հիմք են հանդիսանում կրթական գործընթացի արդյունավետ կառավարման և պլանավորման համար, 2. հիմնավորել կրթության կառավարման արդյունավետության հարցում կրթության օրենսդրության ճիշտ կիրարկման կարևորությունը, 3. ճիշտ արժևորել և գնահատել կրթական գործընթացի մասնակիցների իրավահարաբերությունները, 4. կիրառել ստացած գիտելիքները պրակտիկ գործունեության մեջ:
<p>15. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ul style="list-style-type: none"> • դասախոսություն • ինքնուրույն աշխատանքներ
<p>16. Գնահատման մեթոդները և չափանիշները.</p> <p>▪ Հանրագումարային քննություն՝ իրականացվում է բանավոր քննության ձևաչափով՝ քննական փոմսերով: Առավելագույնը՝ 20 միավոր:</p>
<p>17. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <ul style="list-style-type: none"> ▪ Կրթության օրենսդրության մեջ օգտագործվող հիմնական հասկացությունները: ▪ Կրթության բնագավառում օրենսդրության խնդիրները: ▪ Կրթության բնագավառում պետական քաղաքականությունը: ▪ Կրթական իրավունքի պետական երաշխիքները: ▪ Կրթական համակարգը: ▪ Պետական կրթական չափորոշիչներն ու կրթական ծրագրերը: ▪ Կրթության ձևերը: ▪ Կրթության գործընթացի կազմակերպումը: ▪ Հանրակրթական հիմնական ծրագրերի իրականացումը: ▪ Մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումը: ▪ Ուսումնական հաստատությունները: ▪ Կրթության համակարգի կառավարումը: ▪ Կրթական համակարգի սոցիալական երաշխիքները: ▪ Միջազգային համագործակցությունը կրթության բնագավառում:

2801/Մ03	Կառավարման տեսություններ	3 կրեդիտ
2 ժամ/շաբաթ	10 ժամ դասախոսություն,	
առաջին կիսամյակ	հնրգ.	
<p>Դասընթացի նպատակն է</p> <ul style="list-style-type: none"> • սովորողներին ներկայացնել կրթության կառավարման ժամանակակից տեսությունները, • վերլուծել կրթության կառավարման ժամանակակից տեսությունների իրագործման արդյունավետ մեխանիզմները: 		
<p>Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ul style="list-style-type: none"> • նկարագրել կրթության կառավարման ժամանակակից տեսությունները, • ներկայացնել կառավարման տեսությունների փարբերություններն ու առանձնահատկությունները՝ ըստ ժամանակագրական և տիպաբանական դրսևորման: • հիմնավորել ճանաչողական զարգացման տեսության դերը կրթության կազմակերպման և կառավարման գործընթացում, <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ul style="list-style-type: none"> • վերլուծել մարդկային հարաբերությունների Մեյոյի տեսությունը, • արժևորել գիտական կառավարման Թեյլորի տեսությունը համեմատել կառավարման տեսությունները և փաստարկել դրանց դերը կրթության բնագավառում: 		
<p>Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</p> <ul style="list-style-type: none"> - ներկայացնել կրթության կառավարման տեսություններում ներառված այն հիմնարար գաղափարները, որոնք հիմք են հանդիսանում արդյունավետ կառավարման և պլանավորման համար, - հիմնավորել կրթության կառավարման արդյունավետության հարցում կրթության բարձր որակի ապահովման խնդիրը՝ կանխատեսելով կրթության ոլորտի առջև ծառայած մարտահրավերները կրթական քաղաքականության պլանավորման և իրականացման արդյունքում, - արդյունավետ կիրառել կրթության կառավարման մեթոդներն ու միջոցները՝ հաշվի առնելով կառավարման իրավիճակային մոտեցման տեսությունը հանրակրթության և բարձրագույն կրթության համակարգերում: 		

<p>Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ul style="list-style-type: none"> • դասախոսություն՝ շարժասահիկների ուղեկցությամբ • սեմինար պարապմունք, դերային խաղեր
<p>Գնահատման մեթոդները և չափանիշները.</p> <p>▪ Եզրափակիչ քննություն՝ իրականացվում է բանավոր քննության ձևաչափով, քննական փոմսերով: Առավելագույնը 20 միավոր արժեքով:</p>
<p>Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <ul style="list-style-type: none"> • Կրթության կառավարման տեսությունների համառոտ ակնարկ: • Գիտական կառավարման Թեյլորի տեսությունը: • Մարդկային հարաբերությունների Մեյոյի տեսությունը: • Ա. Թոմսոնի կառավարման տեսությունը: • Ճանաչողական զարգացման տեսություն: • Զոն Դյուիի տեսության հիմնական դրույթները: • Մաքգրեգորիի կառավարման մոդելը:

2801/Մ04	Կրթության կառավարման հիմունքներ	6 կրեդիտ
4 ժամ/շաբաթ	20 ժամ դասախոսություն	
առաջին կիսամյակ	Եզրափակիչ գնահատումով	
<p>Դասընթացի նպատակն է</p> <ul style="list-style-type: none"> • ներկայացնել կրթության երկու մակարդակների՝ հանրակրթության և բարձրագույն կրթության համակարգերի նպատակը, խնդիրները, կառուցվածքը, գործունեության չափանիշները, կառավարման ենթահամակարգերի գործառույթները և կառավարող սուբյեկտների իրավասությունները, • մեկնաբանել կրթության կառավարման սկզբունքները, գործառույթները, մեթոդներն ու ոճերը: 		
<p>Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ul style="list-style-type: none"> • ծանոթանալ կրթության կառավարման տեսություններում ներառված այն հիմնարար գաղափարներին, որոնք հիմք են հանդիսանում արդյունավետ կառավարման համար, • ծանոթանալ կառավարման կարևոր սկզբունքներին, գործառույթներին, 		

մեթոդներին և ոճերին,

- ճանաչել և քննարկել կրթության կառավարչական գործընթացները, դրանց վերաբերյալ տալ սեփական մոտեցումներ:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

- ստացած համապարփակ գիտելիքները կիրառել հանրակրթության և բարձրագույն կրթության կառավարման համակարգերում,

- ճիշտ ընտրել և արդյունավետ կիրառել կրթության կառավարման գործառույթները, մեթոդներն ու միջոցները՝ հաշվի առնելով իրավիճակային մոտեցման տեսությունը,

- կանխատեսել այն դժվարությունները, որոնք կարող են ծագել կառավարման գործընթացում և տալ համապատասխան լուծում

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ / եթե այդպիսիք կան/

- կառավարչական գործողությունները վերլուծելիս հիմքում դնել երևույթների պատճառահետևանքային կապը,

- ճիշտ արժևորել և գնահատել կոլեկտիվի անդամների ներուժը, առկա խնդիրները և ըստ այդմ էլ իրականացնել կառույցի աշխատանքի պլանավորման, կազմակերպման, վերահսկման, կարգավորման, կոորդինացման գործառույթները:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

- ներկայացնել կրթության կառավարման տեսություններում ներառված այն հիմնարար գաղափարները, որոնք հիմք են հանդիսանում արդյունավետ կառավարման և պլանավորման համար,

- սահմանել կառավարման սկզբունքները, գործառույթները, մեթոդները և հաղորդակցման ոճերը, էթիկայի նորմերը՝ վերարտադրելով կառավարման տարբեր իրողություններ,

- ճանաչել և քննարկել կրթության կառավարչական գործընթացները, դրանցում եղած գործոնները՝ ներկայացնելով տարբեր երկրների փորձը,

- աղյուսավետ կիրառել կրթության կառավարման մեթոդներն ու միջոցները՝ հաշվի առնելով կառավարման իրավիճակային մոտեցման տեսությունը հանրակրթության և բարձրագույն կրթության համակարգերում,

- Կանխատեսել և վերլուծել այն դժվարությունները, որոնք կարող են ծագել կառավարման գործընթացում, տալ համապատասխան լուծումներ՝ հաշվի առնելով ռիսկերը,

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

- դասախոսություն՝ շարժասահիկների ուղեկցությամբ,
- սեմինար պարապմունք, դերային խաղեր:

Գնահատման մեթոդները և չափանիշները.

▪ **1-ին ընթացիկ քննություն՝** իրականացվում է գրավոր ձևաչափով, քննական տոմսերով: Քննական տոմսում ներառված է 3 տեսական հարց՝ 2,2,1-ական միավորներով:

▪ **2-րդ ընթացիկ քննություն՝** իրականացվում է գրավոր ձևաչափով, քննական տոմսերով: Քննական տոմսում ներառված է 3 տեսական հարց՝ 2,2,1-ական միավորներով:

▪ **Եզրափակիչ քննություն՝** իրականացվում է բանավոր քննության ձևաչափով, քննական տոմսերով: Առավելագույնը՝ 10 միավոր:

18. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

- Հանրակրթության և բարձրագույն կրթության համակարգերի նպատակը, խնդիրները, կառուցվածքը
- Կառավարման ենթահամակարգերը և կառավարող սուբյեկտների իրավասությունները
- Կառավարման սկզբունքներն ու գործառույթները
- Կառավարման մեթոդներն ու ոճերը
- Կրթական ինովացիոն գործընթացները հանրակրթության և բարձրագույն կրթության համակարգերում:

3. Մասնագիտական պարտադիր դասընթացներ

2801/Մ05	Բարձրագույն կրթության պլանավորում	3 կրեդիտ
2 ժամ/շաբաթ	10 ժամ դասախոսություն	
Երկրորդ կիսամյակ	հանրագումարային	
Դասընթացի նպատակն է		
<ul style="list-style-type: none"> • ուսանողներին ներկայացնել կառավարման ենթահամակարգերի և սուբյեկտների պլանավորման աշխատանքները, 		

- վերլուծել պլանավորման ընթացքում տարվող քաղաքականությունը և ռազմավարությունը բարձրագույն դպրոցում:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և հմացություն

- նկարագրել բարձրագույն կրթության պլանավորման չափանիշները և բարձրագույն կրթության պլանավորման ընթացքն ըստ կառավարման ենթահամակարգերի,
- բացահայտել բարձրագույն դպրոցի պլանավորման առանձնահատկությունները և ռազմավարությունը,
- մշակել բարձրագույն կրթության պլանավորման չափանիշները,
- վերլուծել բարձրագույն կրթության համակարգի արտաքին և ներքին միջավայրը՝ բացահայտելով պլանավորման առանձնահատկությունները
- կանխատեսել և ախտորոշել բարձրագույն կրթության պլանավորումը խթանող և խոչընդոտող գործոնները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

- հիմնավորել բարձրագույն կրթության պլանավորման կարևորությունն ու անհրաժեշտությունը,
- գնահատել բարձրագույն կրթության կառավարման ռազմավարական պլանավորման արդյունավետությունը,
- նախագծել բարձրագույն կրթության պլանավորման ռազմավարության քայլերը և կանխատեսել վերջնարդյունքները,
- կազմել բարձրագույն կրթության ռազմավարական պլան՝ հաշվի առնելով արդի զարգացումները,
- կազմել բուհի առանձին մասնագիտության ուսումնական և աշխատանքային պլաններ, առանձին ամբիոնի տարեկան բեռնվածություն:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

- կանխատեսել այն դժվարությունները, որոնք կարող են ծագել ուսումնական ծրագրերի կազմման, պլանավորման, կառավարման գործընթացում և տալ համապատասխան լուծումներ,
- հիմնավորել կրթության կառավարման արդյունավետության հարցում կրթության բարձր որակի ապահովման խնդիրը՝ կանխատեսելով կրթության ոլորտի առջև ծառայած մարտահրավերները կրթական քաղաքականության պլանավորման և իրականացման արդյունքում:
- ճիշտ արժևորել և գնահատել կոլեկտիվի անդամների ներուժը, առկա խնդիրները և ըստ այդմ էլ իրականացնել կառույցի աշխատանքների պլանավորման, կազմակերպման,

վերահսկման, կարգավորման և կորրեկցիանցման գործառույթներ:
<p>Գիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ul style="list-style-type: none"> • դասախոսություն՝ շարժասահիկների ուղեկցությամբ • ռեֆերատներ, ներկայացումներ, քննարկումներ:
<p>Գնահատման մեթոդները և չափանիշները.</p> <p>▪ Եզրափակիչ քննություն՝ իրականացվում է բանավոր քննության ձևաչափով, քննական տոմսերով: Առավելագույնը 20 միավոր արժեքով:</p>
<p>Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <ul style="list-style-type: none"> • Բարձրագույն կրթության պլանավորումը ՀՀ կրթության պլանավորման ենթաֆեքսիում: • Ռազմավարական պլանավորման գործիքամիջոցները: • ԵՊՀ արտաքին միջավայրի վերլուծությունը, ուժեղ և թույլ կողմերի վերլուծություն: • ԵՊՀ ներքին միջավայրի վերլուծություն: • Պլանավորման չափանիշները: • ԵՊՀ կառավարման ենթահամակարգերին համապատասխան պլանավորման առանձնահատկությունները: • Բուհ-ի գործող ռազմավարության վերլուծություն: • Ռազմավարական պլանի մոնիթորինգ:

2801/Մ06	Հանրակրթության պլանավորում	3 կրեդիտ
2 ժամ/շաբաթ	10 ժամ դասախոսություն	
Երկրորդ կիսամյակ	Հանրագումարային	
<p>Դասընթացի նպատակն է</p> <ul style="list-style-type: none"> • ուսանողներին ներկայացնել կառավարման ենթահամակարգերի և սուբյեկտների գործունեության պլանավորումը հանրակրթության ոլորտում՝ • վերլուծել պլանավորման ընթացքում տարվող քաղաքականությունը և 		

ռազմավարությունը:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

- նկարագրել հանրակրթության պլանավորման չափանիշները և հանրակրթության պլանավորման ընթացքն ըստ կառավարման ենթահամակարգերի,
- բացահայտել հանրակրթական դպրոցի պլանավորման առանձնահատկությունները և ռազմավարությունը,
- մշակել հանրակրթության պլանավորման չափանիշները,
- վերլուծել հանրակրթության համակարգի արտաքին և ներքին միջավայրը՝ բացահայտելով պլանավորման առանձնահատկությունները
- կանխատեսել և ախտորոշել հանրակրթության պլանավորումը խթանող և խոչընդոտող գործոնները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

- հիմնավորել հանրակրթության պլանավորման կարևորությունն ու անհրաժեշտությունը,
- մշակել պլանավորման չափանիշները՝ քննարկելով գործիքակազմը,
- գնահատել հանրակրթության կառավարման պլանավորման արդյունավետությունը,
- նախագծել հանրակրթության ենթահամակարգերի պլանավորումը և կանխատեսել վերջնարդյունքները,
- կազմել հանրակրթության զարգացման պլան՝ հաշվի առնելով արդի զարգացումները,

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

- կանխատեսել այն դժվարությունները, որոնք կարող են ծագել ուսումնական ծրագրերի կազմման, պլանավորման, կառավարման գործընթացում և փալ համապատասխան լուծումներ,
- հիմնավորել կրթության կառավարման արդյունավետության հարցում կրթության բարձր որակի ապահովման խնդիրը՝ կանխատեսելով կրթության ոլորտի առջև ծառայած մարտահրավերները կրթական քաղաքականության պլանավորման և իրականացման արդյունքում:
- ճիշտ արժևորել և գնահատել կոլեկտիվի անդամների ներուժը, առկա խնդիրները և ըստ այդմ էլ իրականացնել կառույցի աշխատանքների պլանավորման, կազմակերպման, վերահսկման, կարգավորման և կորրեկցիանցման գործառույթներ:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

- դասախոսություն՝ շարժասահիկների ուղեկցությամբ,
- ռեֆերատների ներկայացումներ, նախագծեր:

Գնահատման մեթոդները և չափանիշները.

▪ **Եզրափակիչ քննություն՝** իրականացվում է բանավոր քննության ձևաչափով, քննական փոմսերով: Առավելագույնը 20 միավոր արժեքով :

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

- ՀՀ կրթության պլանավորում:
- Ռազմավարական պլանավորման գործիքամիջոցները:
- Հանրակրթության պլանավորման միջոցները և գործիքակազմը:
- Արտաքին և ներքին միջավայրերի վերլուծություն:
- Հանրակրթության պլանավորման չափանիշները:
- Ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորում:

2801/Մ07	Կրթության որակի ապահովում և վերահսկողություն	6 կրեդիտ
4 ժամ/շաբաթ	20 ժամ դասախոսություն	
երկրորդ կիսամյակ	Եզրափակիչ գնահատումով	
<p>Դասընթացի նպատակն է.</p> <ul style="list-style-type: none"> • ուսանողներին ներկայացնել կրթության որակի ապահովման խնդիրները՝ փայլով որակի համաեվրոպական սահմանումները, • մեկնաբանել կրթության որակի ապահովման ներքին և արտաքին գործոնները: • ներկայացնել որակի ներքին և արտաքին վերահսկողության համակարգերը, հավաքարմագրում, նպատակը, խնդիրները: 		
<p>Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ul style="list-style-type: none"> • ծանոթանալ որակի համաեվրոպական սահմանումներին՝ փայլով դրանց վերլուծությունները, • մեկնաբանել կրթության որակի ապահովման ներքին և արտաքին գործոնները, վերլուծել որակի գնադրման մոտեցումներն ու մոդելները: 		

բ. գործնական մասնագիտական կարողություններ

- ստացած համակարգված գիտելիքները կիրառել կրթության որակի ապահովման և վերահսկողության գործընթացում,
- վեր հանել և շարունակել այն բոլոր դժվարություններն ու խնդիրները, որ կարող են ծագել որակի ներքին ապահովման ներհամալսարանական համակարգի գործառույթներում

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ /եթե այդպիսիք կան/

- որակի արտաքին վերահսկողության համակարգի գործունեության վերլուծության արդյունքում բացահայտել կիրառվող մեխանիզմների արդյունավետությունը:
- կարևորել և հիմնավորել կրթության որակի միջազգային հավասարմագրման դերը կրթության համակարգի զարգացման գործում:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

- կրթության կառավարման արդյունավետության հարցում հիմնավորել կրթության բարձր որակի ապահովման խնդիրը՝ կանխատեսելով կրթության ոլորտի առջև ծառայած մարտահրավերները կրթական քաղաքականության պլանավորման և իրականացման արդյունքում,
- կրթության արդյունավետ կառավարման համակարգում կարևորել կրթության ներքին և արտաքին որակի ապահովման և վերահսկողության հարաբերակցությունը,
- կանխատեսել և վերլուծել այն դժվարությունները, որոնք կարող են ծագել կառավարման գործընթացում, տալ համապատասխան լուծումներ՝ հաշվի առնելով ռիսկերը:

Գնահատման մեթոդները և չափանիշները.

- **1-ին ընթացիկ քննություն**՝ իրականացվում է գրավոր ձևաչափով՝ 5 միավորով:
- **2-րդ ընթացիկ քննություն**՝ իրականացվում է բանավոր ձևաչափով՝ 5 միավորով:
- **Եզրափակիչ քննություն**՝ իրականացվում է բանավոր քննության ձևաչափով: Առավելագույնը 10 միավորով:

19. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

- Կրթության որակի համաեվրոպական սահմանումները
- Կրթության որակի ապահովման ներքին և արտաքին գործոնները
- Որակի ապահովման ներհամալսարանական համակարգի նպատակը, խնդիրները, գործառույթները

- Որակի գնահատման մոտեցումները
- Որակի գնահատման մոդելները:
- Որակի ներքին վերահսկողություն իրականացնող ենթահամակարգերը և սուբյեկտները
- Որակի արտաքին վերահսկողության համակարգերը, մեխանիզմները. հավատարմագրում, նպատակ, խնդիրները
- Դասախոսական կազմի որակի գնահատում
- Ուսանողության որակի գնահատում
- Ուսումնական ծրագրերի որակի գնահատում

2801/Մ08	Ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպումը հանրակրթական դպրոցում	6 կրեդիտ
4 ժամ/շաբաթ	10 ժամ դասախոսություն	
Երկրորդ կիսամյակ	Եզրափակիչ գնահատումով	
<p>Դասընթացի նպատակն է</p> <ul style="list-style-type: none"> • ծանոթացնել սովորողներին ներդպրոցական կառավարման ամբողջական համակարգին, • ներկայացնել ուսումնական և դաստիարակչական աշխատանքների իրականացման առանձնահատկությունները հանրակրթական դպրոցում: 		
<p>Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ul style="list-style-type: none"> • սահմանել ուսումնադաստիարակչական գործընթացի կառավարման հիմնական հասկացությունները • ներկայացնել ներդպրոցական կառավարման ենթահամակարգերը և սուբյեկտները, • մատնանշել ներդպրոցական կառավարման առավել արդյունավետ գործառույթները, • հիմնավորել աշակերտական ինքնավարության դերը ներդպրոցական կառավարման համակարգում <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ul style="list-style-type: none"> • վերլուծել ներդպրոցական կառավարման սուբյեկտների իրավասություններն ու պարտականությունները, • ներկայացնել հանրակրթական դպրոցի ժողովրդավարացման էությունը, 		

ուսումնական աշխատանքներում՝ համագործակցային ուսուցման և համագործակցային աշխատանքի կարևորությունն ու արդյունավետությունը:

- արժևորել ներդրողական կառավարման համակարգում դաստիարակչական, արտադասարանական աշխատանքների դերը սովորողների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործում,
- գնահատել դպրոց-համայնք համագործակցությունը դաստիարակչական աշխատանքների կառավարման համակարգում,

գ. ընդհանրական (փոխանցելի) կարողություններ

- շեշտադրել դաստիարակչական-համագործակցային աշխատանքների անհրաժեշտությունն ու արդյունավետությունը կառավարման գործում:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

- կանխատեսել այն դժվարությունները, որոնք կարող են ծագել ուսումնական ծրագրերի կազմման, պլանավորման, կառավարման գործընթացում և փալ համապատասխան լուծումներ,
- աղյունավետ կիրառել կրթության կառավարման մեթոդներն ու միջոցները՝ հաշվի առնելով կառավարման իրավիճակային մոտեցման տեսությունը հանրակրթության համակարգում,
- ճիշտ արժևորել և գնահատել կոլեկտիվի անդամների ներուժը, առկա խնդիրները և ըստ այդմ էլ դպրոցում իրականացնել կառույցի աշխատանքների պլանավորման, կազմակերպման, վերահսկման, կարգավորման և կոորդինացման գործառույթներ
- արդյունավետ պլանավորել ժամանակն ու ռեսուրսները կրթության կառավարման գործում:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

- դասախոսություն՝ շարժասահիկների ուղեկցությամբ
- գործնական աշխատանքներ, դերային խաղեր, համագործակցային մեթոդներ:

Գնահատման մեթոդները և չափանիշները.

▪ **1-ին ընթացիկ քննություն՝** իրականացվում է գրավոր ձևաչափով, քննական տոմսերով: Առավելագույնը՝ 5 միավոր:

▪ **2-րդ ընթացիկ քննություն՝** իրականացվում է գործնական ներկայացման միջոցով: Սովորողները, նախապես ընտրված թեմաներից, ներկայացնում են ռեֆերատներ՝ շարժասահիկների ուղեկցությամբ: Առավելագույնը՝ 5 միավոր:

▪ **Եզրափակիչ քննություն՝** իրականացվում է բանավոր քննության ձևաչափով՝ քննական տոմսերով: Առավելագույնը՝ 10 միավոր:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

- Ժողովրդավար դպրոցի գործունեության նպատակը, խնդիրները, զարգացման հեռանկարները:

- Ներդպրոցական կառավարման սկզբունքները, գործառույթները:

- Ներդպրոցական կառավարման մեթոդները:

- Կառավարման ընդհանուր և անհատական ոճերի հարաբերակցությունը:

- Դպրոցի կառավարման բարձրագույն մարմին. դպրոցական խորհուրդ, իրավասությունները:

- Կառավարման սուբյեկտներ: Դաստիարակչական աշխատանքի գծով փոխտնօրեն:

- Կրթական աջակցությունների գծով փոխտնօրեն:

- Մանկավարժական խորհուրդ, իրավասությունները:

- Առարկայական հանձնախմբերի գործունեությունը:

- Ուսումնական աշխատանքների վերահսկողության ձևերը, իրականացման ուղիներ:

- Տնօրեն-աշակերտ համագործակցությունը, աշակերտական ինքնավարություն:

- Դաստիարակչական աշխատանքների պլանավորումը դպրոցի կառավարման համակարգում:

- Դասուղեկի իրավասություններն ու պարտականությունները:

- Արտադասարանական դաստիարակչական միջոցառումներն աշակերտների ինքնաճանաչման, ինքնաիրացման և ինքնագնահատման եղանակ:

- Արտադպրոցական աշխատանքների կազմակերպումն ու վերահսկողությունը

- Դպրոց-ընտանիք համագործակցությունը դաստիարակչական աշխատանքների կառավարման համակարգում:

- Դպրոց-համայնք համագործակցությունը դաստիարակչական աշխատանքների կառավարման համակարգում:

- Գրադարանը դպրոցի դաստիարակչական աշխատանքի կառավարման ենթահամակարգ:

2801/Մ09	Կառավարման հոգեբանություն	3 կրեդիտ
2 ժամ/շաբաթ	10 ժամ դասախոսություն	

Երրորդ կիսամյակ	Հանրագումարային
<p>Դասընթացի նպատակն է</p> <ul style="list-style-type: none"> • ուսումնասիրել կրթության կառավարման ոլորտի ղեկավարի, ձեռներեց-ղեկավարի, լիդերի, ձեռներեցության, ինչպես նաև՝ լիդերության կենսաբանական և սոցիալական, նաև՝ պաթոլոգիական կողմի հոգեբանական հիմքերը: • փոխանցել գիտելիքներ աշխարհի առաջատար երկրների կրթության կառավարչական գործունեությունում ղեկավարի հոգեբանական առանձնահատկությունների, վարքային մակարդակում ներգործության մեխանիզմների, կազմակերպչական վարքի կառավարման կոգնիտիվ ու վարքային մոտեցումների վերաբերյալ, հաշվի առնելով արդյունավետ վարքի բաղադրիչները և հիմնական դրույթները • ծանոթացնել կառավարման փարբեր գործնական և թրենինգային մոտեցումներին, ռիսկի գնալու ներքին պատրաստակամության ակտիվացմանն ուղղված հոգեբանական վարժություններին: 	
<p>20. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ul style="list-style-type: none"> • բացատրել կրթության ոլորտի կառավարման արդյունավետություն ապահովող գործոնների հոգեբանական, սոցիալ-կենսաբանական կողմը, • վերլուծել կառավարման այլ երկրների, մշակույթների փորձը, արդյունավետ ներգործության հոգեբանական մեխանիզմները, • ներկայացնել մարդկանց մոտիվացնելու, կազմակերպելու և ղեկավարելու զարգացմանն ուղղված հոգեբանական մեթոդները: <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ul style="list-style-type: none"> • կիրառել հոգեբանական (տեսական և գործնական) գիտելիքները թրենինգային, հետազոտական աշխատանքներ կազմակերպելիս, • վերլուծել կառավարման հոգեբանական առանձնահատկությունները՝ կրթության տեղական և համաշխարհային գործընթացների համատեքստում, • ցուցաբերել անհրաժեշտ հմտություններ մարդկանց կառավարելու և իր հետևից տանելու առանձնահատկության, անձի արդարացված ռիսկի զարգացման հետ կապված հոգեբանական վարժությունների իմացության, • իրականացնել գործնական աշխատանքներ անձի մակարդակում մարդկանց կառավարելու, լիդերության հատկության դրսևորում և զարգացում ապահովելու համար: 	

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ (եթե այդպիսիք կան)

- կիրառել գիտելիքները պրակտիկայում,
- բացահայտել արդյունավետ կառավարման դրսևորմանը խոչընդոտող հոգեբանական գործոնները,
- կազմակերպել հոգեբանական վարժանքների շարք՝ կիրառելով հոգեբանական տեխնիկաներ կառավարման հոգեբանական կողմը մշակելիս:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

- ճանաչել և քննարկել կրթության կառավարչական գործընթացները, դրանցում եղած գործոնները՝ ներկայացնելով փարբեր երկրների փորձը,
- ճիշտ արժևորել և գնահատել կոլեկտիվի անդամների ներուժը, առկա խնդիրները և ըստ այդմ էլ իրականացնել կառույցի աշխատանքների պլանավորման, կազմակերպման, վերահսկման, կարգավորման և կոորդինացման գործառույթներ,
- կիրառել ստացած գիտելիքները պրակտիկ գործունեության մեջ:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

- դասախոսություններ, քննարկումներ,
- թրենինգային ծրագրերի քննարկումներ, դերային խաղեր:

Գնահատման մեթոդները և չափանիշները.

▪ **Եզրափակիչ քննություն՝** իրականացվում է բանավոր քննության ձևաչափով՝ քննական տոմսերով: Առավելագույնը՝ 20 միավոր:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

- Ղեկավարման-ձեռներեցության-լիդերության հոգեբանական հիմքերը
- Ժամանակակից արդյունավետ ղեկավար-լիդերի հոգեգրամման
- Ղեկավարի ինքնադրսևորում, ինքնիրացում
- Կոլեկտիվի բարոյա հոգեբանական մթնոլորտ
- Կառավարման էթնոհոգեբանական կողմը
- Կառավարմանն ուղղված հոգեբանական տեխնիկաներ

2801/Մ10	Կրթական քաղաքականություն ու նազնավարություն	3 կրեդիտ
2 ժամ/շաբաթ	10 ժամ դասախոսություն	
Երրորդ կիսամյակ	հանրագումարային	
<p>Դասընթացի նպատակն է.</p> <ul style="list-style-type: none"> • սովորողներին ներկայացնել կրթական քաղաքականությունը, • ՀՀ կրթության ոլորտում իրականացվող նազնավարությունը: 		
<p>Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ul style="list-style-type: none"> • գիտակցել և վերարտադրել կրթական քաղաքականության նպատակն ու խնդիրները, • սահմանել կրթական քաղաքականության սկզբունքները, • հիմնավորել սուբյեկտների դերը կրթական քաղաքականության համակարգման գործում, • քննարկել կրթական քաղաքականությունը պայմանավորող գործոնները, • գիտակցել և բացատրել կրթական քաղաքականության և նազնավարության փոխառնչությունները, • նկարագրել նազնավարության հիմքում ընկած ժամանակակից հիմնախնդիրները, • որոշել նազնավարության բաղադրիչները, <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ul style="list-style-type: none"> • փաստարկել կրթական քաղաքականության իրականացման ուղիները, • կիրառել նազնավարական պլանավորման գործիքավորումները, • փորձարկել նազնավարության կազմման չափանիշները, • վերլուծել բուհի գործող նազնավարության և զարգացման նազնավարության առանձնահատկությունները, • իրականացնել բուհի գործող նազնավարության և զարգացման նազնավարության փորձագիտական գնահատում: 		
<p>Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</p> <p>- հիմնավորել կրթության կառավարման արդյունավետության հարցում կրթության բարձր որակի ապահովման խնդիրը՝ կանխատեսելով կրթության ոլորտի առջև ծառայած մարտահրավերները կրթական քաղաքականության պլանավորման</p>		

▪ Կրթական գործող ռազմավարություն և զարգացման ռազմավարություն. փորձագիտական գնահատում:

2801/Մ11	Կրթության փիլիսոփայություն	3 կրեդիտ
2 ժամ/շաբաթ	10 ժամ դասախոսություն	
Երրորդ կիսամյակ	Հանրագումարային	
<p>Դասընթացի նպատակն է</p> <ul style="list-style-type: none"> • սովորողներին ներկայացնել կրթության փիլիսոփայական հիմնախնդիրները • կրթության ու փիլիսոփայության առնչությունները: 		
<p>Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ul style="list-style-type: none"> • Հասկանալ կրթության մասին տարբեր փիլիսոփայական մոտեցումների էությունը, • սահմանել կրթության և փիլիսոփայության առնչությունները, • բացատրել գիտելիքի մասին տարբեր փիլիսոփայական մոտեցումների առանձնահատկությունները, • նկարագրել կրթության ճգնաժամի մասին տարբեր փիլիսոփայական տեսություններ, • մեկնաբանել տեխնոլոգիական զարգացումների ազդեցությունը կրթության վրա: <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ul style="list-style-type: none"> • կազմել կրթության փիլիսոփայական խնդիրների ցանկ և դասակարգել դրանք ըստ կարևորության, • կիրառել ձեռք բերած գիտելիքները Հայաստանի կրթական համակարգի խնդիրների լուծումներ առաջարկելու նպատակով: • ներկայացնել կրթության փիլիսոփայական նախընտրելի մոտեցումները և հիմնավորել դրանց կարևորությունը: 		

<p>Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</p> <ul style="list-style-type: none"> - արդյունավետ պլանավորել ժամանակն ու ռեսուրսները կրթության կառավարման գործում, - կիրառել սրացած գիտելիքները պրակտիկ գործունեության մեջ:
<p>Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ul style="list-style-type: none"> • դասախոսություն • ինտերակտիվ ուսուցում՝ խճանկար, բանավեճ, քննարկում • նախագծային ուսուցում
<p>Գնահատման մեթոդները և չափանիշները.</p> <p>▪ Եզրափակիչ քննություն՝ իրականացվում է բանավոր քննության ձևաչափով՝ Առավելագույնը՝ 20 միավորով:</p>
<p>Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <ul style="list-style-type: none"> ▪ Կրթության փիլիսոփայության առարկան: ▪ Տեխնոլոգիական զարգացման փիլիսոփայական մեկնաբանությունները և դրանց առնչությունը կրթության հետ: ▪ Կրթության փիլիսոփայության հիմնական տեսությունները: ▪ Գիտելիքը և դրա ձեռքբերման եղանակները կրթության փիլիսոփայության տեսանկյունից: ▪ Արհեստական ինտելեկտի ազդեցությունը կրթության համակարգի վրա:

2801/Մ12	Կրթության ֆինանսավորում	3 կրեդիտ
2 ժամ/շաբաթ	10 ժամ դասախոսություն	
երրորդ կիսամյակ	հանրագումարային	
<p>Դասընթացի նպատակն է՝</p> <ul style="list-style-type: none"> • սովորողներին ծանոթացնել ՀՀ բյուջետային համակարգին, իրավունքներին, բյուջետային գործընթացներին, • ներկայացնել ՀՀ կրթության ֆինանսավորման մեխանիզմները: 		
<p>Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ul style="list-style-type: none"> • ներկայացնել ՀՀ պետական բյուջեի կառուցվածքը և կրթության ոլորտի 		

<p>Ֆինանսավորումը,</p> <ul style="list-style-type: none"> • սահմանել կրթության ոլորտին ներկայացվող ֆինանսական հոսքերի տեղաշարժը, • նկարագրել կրթության ոլորտում ֆինանսավորման պետական քաղաքականությունը • դասակարգել հանրակրթության և ներառական ուսուցմամբ դպրոցների ֆինանսավորման հիմնական առանձնահատկությունները <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ul style="list-style-type: none"> • նախագծել հանրակրթական հաստատության տարեկան բյուջեն, • վերլուծել դպրոցի ֆինանսական հոսքերի տեղաբաշխումը, • առաջարկել դպրոցի ֆինանսական հոսքերի ավելացման նոր նախագծեր, • գնահատել ֆինանսական միջոցների դերը կրթության զարգացման գործընթացում՝ հաշվի առնելով ռիսկերը:
<p>Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</p> <ul style="list-style-type: none"> - կանխատեսել այն դժվարությունները, որոնք կարող են ծագել ուսումնական ծրագրերի կազմման, պլանավորման, կառավարման գործընթացում և տալ համապատասխան լուծումներ, - վերլուծել այն դժվարությունները, որոնք կարող են ծագել կառավարման գործընթացում, տալ համապատասխան լուծումներ՝ հաշվի առնելով ռիսկերը, - արդյունավետ պլանավորել ժամանակն ու ռեսուրսները կրթության կառավարման գործում:
<p>Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ul style="list-style-type: none"> • դասախոսություն՝ շարժասահիկների ուղեկցությամբ, • ռեֆերատներ, ներկայացումներ:
<p>Գնահատման մեթոդները և չափանիշները.</p> <ul style="list-style-type: none"> ▪ Եզրափակիչ քննություն՝ իրականացվում է բանավոր քննության ձևաչափով՝ քննական տոմսերով: Առավելագույնը՝ 20 միավոր:
<p>Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <ul style="list-style-type: none"> ▪ ՀՀ կրթության համակարգի ֆինանսավորման հիմնական ձևերը: ▪ ՀՀ օրենսդրական դաշտը կրթության ֆինանսավորման մասին: ▪ Ուսանողական վարկային համակարգերի ներդրման մեխանիզմները: ▪ Ուսանողական նպաստների տրամադրման կանոնակարգերը և հաշվարկային ձևերը: ▪ Նախահաշիվ, ժամանակացույց, քաղվածք պայմանագրից:

- Կրթական հաստատության ներկայացրած ֆինանսական հաշվետվությունների կազմում և դրանց վերլուծություն:
- Սովորողների ֆինանսավորման հաշվարկային թվակազմի բանաձև:

2801/Մ13	Մարդկային ռեսուրսների կառավարում,	3 կրեդիտ
2 ժամ/շաբաթ	10 ժամ դասախոսություն	
երրորդ կիսամյակ	հնրգ.	
<p>Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել</p> <ul style="list-style-type: none"> • ժամանակակից պայմաններում մարդկային ռեսուրսների կառավարման առանձնահատկությունները կրթական համակարգում, • կարերիայի կառավարման ժամանակակից ձևերն և մեխանիզմները: 		
<p>Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ul style="list-style-type: none"> • մեկնաբանել աշխատանքի կառավարման փիլիսոփայական հիմքերը, • սահմանել կառավարման բարոյական վարքականոնները, • արժևորել մարդկային ռեսուրսների դերը և կարևորությունը կառավարման գործընթացում: <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ul style="list-style-type: none"> • վերլուծել կորպորատիվ մշակույթի ձևավորման, մարդկային ներուժի և առանցքային հմտությունների, կարողությունների կազմակերպման ու պլանավորման հիմնահարցերը, մարդկային ռեսուրսների /անձնակազմի կառավարման հիմնական գործառույթները • կիրառել կոնֆլիկտների լուծման արդյունավետ մեխանիզմներ մարդկային ռեսուրսների կառավարման գործընթացում, • որոշել թեկնածուների համալրման, վերապատրաստման ու մասնագիտական զարգացման աղբյուրները, • գործնականում կազմել մասնավոր դեպքերի հետազոտության պլան-ծրագրեր, • իրականացնել կարիերայի պլանավորման արդյունավետ և գործուն մեխանիզմներ: 		

<p>Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</p> <p>- ճիշտ արժևորել և գնահատել կոլեկտիվի անդամների ներուժը, առկա խնդիրները և ըստ այդմ էլ իրականացնել կառույցի աշխատանքների պլանավորման, կազմակերպման, վերահսկման, կարգավորման և կորդինացման գործառույթներ,</p> <p>-կիրառել սրացած գիտելիքները պրակտիկ գործունեության մեջ:</p>
<p>Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ul style="list-style-type: none"> • դասախոսություն՝ շարժասահիկների ուղեկցությամբ • գործնական աշխատանքներ, ուսումնառության ինտերակտիվ մեթոդներ
<p>Գնահատման մեթոդները և չափանիշները.</p> <p>▪ Եզրափակիչ քննություն՝ իրականացվում է բանավոր քննության ձևաչափով՝ քննական փոմսերով: Առավելագույնը՝ 20 միավորով:</p>
<p>Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <ul style="list-style-type: none"> • Մարդկային ռեսուրսների ռազմավարական կառավարում: • Աշխատակազմի համալրում: • Աշխատակազմի կարարողականի կառավարում: • Աշխատանքային հարաբերությունների կարգավորում: • Վերապատրաստում և մասնագիտական զարգացում: • Կազմակերպական մշակույթ: • Կոնֆլիկտների կառավարում:

2801/Մ14	Ուսումնական ծրագրերի կազմման սկզբունքները	3 կրեդիտ
2 ժամ/շաբաթ	10 ժամ դասախոսություն,	
երրորդ կիսամյակ	հանրագումարային	
<p>Դասընթացի նպատակն է</p> <ul style="list-style-type: none"> • ուսանողներին ծանոթացնել ուսումնական ծրագրերի կազմման հիմնական սկզբունքներին, առանձնահատկություններին, • ներկայացնել ուսումնական ծրագրերի կազմման ժամանակակից պահանջները: 		

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

- ներկայացնել ուսումնական ծրագրերի կազմման սկզբունքները,
- լուսաբանել կրթական և ուսումնական ծրագրերի առանձնահատկությունները,
- վերլուծել ծրագրերին ներկայացվող ժամանակակից պահանջները,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

- գնահատել և գործնականում կիրառել ուսումնական ծրագիրը,
- համադրել ուսումնական ծրագրի կազմման փարբերակները,
- փարբերակել ուսումնական ծրագրի կազմման մեթոդական մասը. դասավանդման մեթոդներ, ուսումնառության և սփուգման մեթոդներ:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

- կանխատեսել այն դժվարությունները, որոնք կարող են ծագել ուսումնական ծրագրերի կազմման, պլանավորման, կառավարման գործընթացում և փալ համապատասխան լուծումներ,
- ճիշտ արժևորել և գնահատել կոլեկտիվի անդամների ներուժը, առկա խնդիրները և ըստ այդմ էլ իրականացնել կառույցի աշխատանքների պլանավորման, կազմակերպման, վերահսկման, կարգավորման և կորրեկցիանցման գործառույթներ,
- կիրառել սրացած գիտելիքները պրակտիկ գործունեության մեջ:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

- դասախոսություն՝ շարժասահիկների ուղեկցությամբ
- գործնական աշխատանքներ, սեմինար պարապմունքներ

Գնահատման մեթոդները և չափանիշները.

▪ **Եզրափակիչ քննություն՝** իրականացվում է բանավոր քննության ձևաչափով՝ քննական տոմսերով: Առավելագույնը՝ 20 միավորով:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

- Կրթական ծրագրի և ուսումնական ծրագրի հարաբերակցությունը, հիմնական փիպերը:
- Ուսումնական ծրագրերի կառուցվածքը, փիպաբանությունը:
- Ուսումնական ծրագրերի կազմման ժամանակակից սկզբունքները:
- Ուսումնական ծրագիր. բացատրական մաս:
- Ուսումնական ծրագիր. բովանդակային մաս:
- Ուսումնական ծրագրի կազմման մեթոդական մաս. դասավանդման մեթոդներ, ուսումնառության և սփուգման մեթոդներ:
- Գրականության ցանկին ներկայացվող պահանջներ:

- *Ուսումնական ծրագրի կազմման փարբերակներ:*

2801/Մ15	Կրթական հետազոտությունների գնահատում,	6 կրեդիտ
4 ժամ/շաբաթ	10 ժամ դասախոսություն 10 ժամ գործնական սեմինար	
երրորդ կիսամյակ	Եզրափակիչ գնահատումով	
<p>Դասընթացի նպատակն է</p> <ul style="list-style-type: none"> • սովորողներին ներկայացնել կրթական հետազոտությունների տվյալների մշակումը, • վերլուծել ու ներկայացնել գնահատման առանձնահատկությունները, • զարգացնել սովորողների վերլուծական և փորձագիտական գնահատման գործիմացությունը: 		
<p>Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ul style="list-style-type: none"> • գիտակցել և վերարտադրել հետազոտությունների գնահատման առանձնահատկությունները, • սահմանել կրթական հետազոտությունների իրականացման հիմքում ընկած հիմնարար սկզբունքներըն ու չափանիշները, • նկարագրել հետազոտությունների գնահատման մոդելները, • բացատրել կրթական հետազոտությունների գնահատման ընթացակարգերը, <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ul style="list-style-type: none"> • մշակել կրթական հետազոտությունների փվյալները, իրականացնել վերլուծություն և ներկայացնել արդյունքները՝ ելնելով կրթական հետազոտությունների գնահատման չափանիշներից, • կազմել և կիրառել կրթական հետազոտությունների գնահատման գործիքավորումներ, ընտրել հիպոթեզի ստուգման հարմարավետ մոդել, • փորձարկել հայտնաբերությունների հուսալիության, վերարտադրելիության կամ հիմնավորվածության, ինչպես նաև հետազոտության արդյունքների հավաստիության որակի գնահատման ձևերը, • փորձարկել կրթական հետազոտությունների արդյունքների վերլուծության 		

տարբերակները:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

- կանխատեսել և վերլուծել այն դժվարությունները, որոնք կարող են ծագել կառավարման գործընթացում, տալ համապատասխան լուծումներ՝ հաշվի առնելով ռիսկերը,
- կազմել և գործնականում կիրառել կրթական հետազոտությունների իրականացման տարատեսակ գործիքակազմեր,
- արդյունավետ պլանավորել ժամանակն ու ռեսուրսները կրթության կառավարման գործում:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

- դասախոսություն՝ շարժասահիկների ուղեկցությամբ,
- գործնական աշխատանքներ:

Գնահատման մեթոդները և չափանիշները.

- **1-ին ընթացիկ քննություն՝** իրականացվում է գրավոր ձևաչափով, քննական ու, 5միավորով:
- **2-րդ ընթացիկ քննություն՝** իրականացվում է գործնական ներկայացման միջոցով: Սովորողները նախապես ընտրված թեմաներից ներկայացնում են ռեֆերատներ՝ շարժասահիկների ուղեկցությամբ:
- **Եզրափակիչ քննություն՝** իրականացվում է բանավոր քննության ձևաչափով՝ քննական տոմսերով: Առավելագույնը՝ 10 միավորով:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

- Կրթության ոլորտում հետազոտությունների գնահատման հիմնախնդիրն ու նպատակները:
- Կրթական հետազոտությունների իրականացման հիմնարար սկզբունքները:
- Հիպոթեզի ստուգման հարմարավետ մոդելի կիրառում:
- Հայտնաբերությունների հուսալիության, վերարտադրելիության կամ հիմնավորվածության, ինչպես նաև հետազոտության արդյունքների հավաստիության որակի գնահատման ձևերը:
- Հետազոտությունների ընթացքում հավաքագրած տվյալների մշակում, վերլուծություն ու ներկայացում:

- Հետազոտության գնահատման մոդելները:
- Հետազոտության գնահատման գործիքավորումների կազմում:
- Հետազոտության մոնիտորինգի առանձնահատկություններն ու ընթացակարգերը:
- Հետազոտության արդյունքների վերլուծություն և դրա հնարավոր փարբերակները
- Հետազոտական-փորձագիտական գնահատման դերը կրթության համակարգի կատարելագործման գործում:

2801/Մ16	Դասական և ժամանակակից գնահատման և թեստավորման տեսություններ,	21. 6 կրեդիտ
4 ժամ/շաբաթ	20 ժամ դասախոսություն	
երրորդ կիսամյակ	Եզրափակիչ գնահատումով.	
<p>Դասընթացի նպատակն է</p> <ul style="list-style-type: none"> • ներկայացնել ուսումնական արդյունքների գնահատման և թեստավորման արդի տեսությունները, • ծանոթացնել գնահատող թեստերի կազմման հիմնական մոտեցումներին, վերլուծել դրանց առանձնահատկությունները, տեսակները և իրագործման տեխնոլոգիաները: 		
<p>Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ul style="list-style-type: none"> • սահմանել ուսումնառության արդյունքների գնահատման թեստերի հիմնական տեսակները, • մեկնաբանել գիտելիքների գնահատման և թեստավորման արդի տեսությունները, • վերլուծել փարբեր տեսակի թեստերի կազմման հիմնական սկզբունքները և դրանց կիրառման ձևերը, • արժևորել թեստավորման ժամանակակից միջոցների արդյունավետությունը կրթական գործընթացում: 		
<p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ul style="list-style-type: none"> • համեմատել ուսումնառության արդյունքների գնահատման ավանդական և 		

ժամանակակից միջոցները և հիմնավորել դրանց կիրառման արդյունավետությունը,

- որոշել թեստերի կազմման արդյունավետ եղանակները և դրանց հարմարավետ կիրառությունն ուսումնական գործընթացում,
- գործնականում կազմել ուսումնառության արդյունքների գնահատման թեստեր,
- ստեղծել ուսումնառության արդյունքների գնահատման ավտոմատացված թեստեր iSpring Sute, Google Survey համակարգերի օգնությամբ:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

- վերլուծել կրթական քաղաքականության իրականացման արդյունավետ մեխանիզմները, գնահատման ժամանակակից միջոցներ,
- կիրառել ստացած գիտելիքները պրակտիկ գործունեության մեջ,
- կիրառել S<S-ները մասնագիտական խնդիրներում:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

- դասախոսություն՝ շարժասահիկների ուղեկցությամբ
- գործնական աշխատանքներ՝ առցանց և ոչ առցանց ռեժիմներում

Գնահատման մեթոդները և չափանիշները.

- **1-ին ընթացիկ քննություն՝** իրականացվում է գրավոր ձևաչափով, քննական 2-ական 5 միավորով:
- **2-րդ ընթացիկ քննություն՝** իրականացվում է գործնական ներկայացման միջոցով: Սովորողները նախապես ընտրված թեմաներից ներկայացնում են ռեֆերատներ՝ շարժասահիկների ուղեկցությամբ:
- **Եզրափակիչ քննություն՝** իրականացվում է բանավոր քննության ձևաչափով՝ քննական տոմսերով: Առավելագույնը՝ 10 միավորով:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

- Դասական և ժամանակակից գնահատման և թեստավորման տեսություններ առարկայի նպատակը, խնդիրները:
- Գիտելիքների գնահատման ավանդական և ժամանակակից մեթոդները:
- Մանկավարժական չափումները, նրա մակարդակներն ու բաղադրիչները:
- Մանկավարժական թեստավորում: Դրանց մշակման ընդհանուր մոտեցումները:
- Մանկավարժական թեստերի նախագծման ժամանակակից տեսությունները:
- Թեստերի դասակարգումը: Թեստային առաջադրանքների տեսակները և

դրանք կազման հիմնական սկզբունքները:

- Թեպավորման ժամանակակից ավտոմատ համակարգերը. iSpring Sute, Google Survey:

- Թեստերի որակի գնահատման հիմնական ցուցիչները՝ հուսալիություն և վալիդություն:

2. Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա

նշել ծրագրի անվանումը

Ծ Ր Ա Գ Ր Ի Մ Ա Ս Ն Ա Գ Ի Ր

1. Ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը	Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա 011301.04.7
2. Բուհը	Երևանի պետական համալսարան
3. Ծրագիրը հավատարմագրված է	
4. Շնորհվող որակավորումը	մանկավարժության մագիստրոս
5. Ծրագրի մեկնարկի ուսումնական տարին	2006-2007ուստարի

6. Ուսումնառության լեզուն	<i>հայերեն</i>
7. Ուսուցման ձևը	<i>հեռակա</i>

8. Ծրագրի ընդունելության չափանիշները/պահանջները.
<i>Մագիստրոսական ծրագրում ընդունելությունն անցկացվում է բանավոր քննության ձևաչափով՝ ընդհանուր մանկավարժությունից:</i>
9. Ծրագրի նպատակները.
<p>Ծրագրի նպատակն է.</p> <ul style="list-style-type: none"> ▪ <i>պատրաստել գիտամեթոդական համակարգված գիտելիքների տեր որակյալ մանկավարժներ հանրակրթական դպրոցների համար,</i> ▪ <i>փոխանցել խոր և համակողմանի գիտելիքներ ուսուցման կազմակերպման ձևերի, ուսուցման սկզբունքների և ուսուցման ժամանակակից մեթոդներին, միջոցների վերաբերյալ:</i>
10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները

Ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի

Ա1. վերլուծել մասնագիտության արդի հիմնախնդիրները,

Ա2. մեկնաբանել կրթական ժամանակակից տեխնոլոգիաները, մեթոդաբանությունը,

Ա3. սահմանել ուսուցման հիմնական հասկացությունները, հայեցակարգային մոտեցումները, տեսակետները, որոնք ընկած են մասնագիտական գործունեության հիմքում՝ հաշվի առնելով սովորողների տարիքային և հոգեբանամանկավարժական առանձնահատկությունները,

Ա4. դասակարգել ուսուցման ժամանակակից մեթոդիկաները և ընտրել ուսումնական առարկայի դասավանդման արդյունավետ մեթոդիկա,

Ա5. ներկայացնել անձի ձևավորման հիմնախնդիրը՝ դիտարկելով կոնֆլիկտների հաղթահարման ուղիները տարբեր տարիքի երեխաների զարգացման գործընթացում:

Բ. գործնական մասնագիտական կարողություններ

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

Բ1. կիրառել ուսուցման ինտերակտիվ մեթոդներ ուսուցման գործընթացում՝ ցուցաբերելով հանդուրժողականություն սովորողների նկատմամբ,

Բ2. օգտագործել ուսուցման ժամանակակից դիդակտիկ և տեխնիկական միջոցները դասավանդման գործընթացում,

Բ3. կանխատեսել ուսուցման գործընթացում հավանական և սպասվելիք արդյունքներն ու թերությունները,

Բ4. վերլուծել և համադրել մանկավարժության, հոգեբանության առկա հիմնախնդիրներում պատճառահետևանքային կապերը՝ գնահատելով ուսումնական առարկաների դասավանդման արդյունավետ մեթոդիկաները,

Բ5. ցուցաբերել նորովի մոտեցում դաստիարակության բաղադրիչներին՝ մեկնաբանելով արտելերացիայի և տարիքային ճգնաժամերի հիմնախնդիրները երեխայի զարգացման գործընթացում,

Բ6. կիրառել ընթացիկ և ավարտական ստուգման և գնահատման գործընթացում մասնագիտական և մեթոդական թղթապանակներ:

գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի

Գ1. զարգացնել սովորողների մտային գործողությունները՝ կիրառելով ժամանակակից տեխնոլոգիաները ուսուցման գործընթացում,

Գ2. օբյեկտիվորեն գնահատել ստացած նոր տեղեկատվության որակն ու արժեքը՝ ստեղծելով միջառարկայական կապեր ուսուցման գործընթացներում,

Գ3. կիրառել ստացած գիտելիքները պրակտիկ գործունեության մեջ՝ օգտվելով տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից, համացանցային, էլեկտրոնային միջոցներից,

Գ4. արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում,

Գ5. հաղորդակցվել օտար լեզվով,

Գ6. կիրառել SCS-ներն ուսուցման գործընթացում:

11. Ծրագրի ուսումնական պլանը

Կցված է

12. Ուսումնական պլանի քարտեզը

Կցված է

13. Գնահատման ձևերը

Կրթական ծրագրի յուրաքանչյուր դասընթացի գնահատման համար նախատեսվում է անցկացնել երկու ընթացիկ և մեկ եզրափակիչ քննություն:

Մասնագիտական ծրագրի ավարտին ներկայացվում է պաշտպանության մագիստրոսական հեղափոխություն (թեզ):

14. Շրջանավարտների ապագա կարիերայի հնարավորությունները

Մագիստրոսական կրթական ծրագրի շրջանավարտները, ստանալով ուսուցչի որակավորում, կարող են աշխատել որպես ուսուցիչ Հայաստանի Հանրապետության հանրակրթական բոլոր դպրոցներում՝ միջին և ավագ:

15. Ուսումնառության օժանդակության ռեսուրսները և ձևերը

Ծրագրի դասընթացների վերաբերյալ մասնագիտական գրականություն, էլեկտրոնային դասախոսությունների փաթեթներ:

16. Կրթական չափորոշիչները կամ ծրագրային կողմնորոշիչները, որոնք օգտագործվել են ծրագիրը մշակելիս

Մասնագիտական կրթական ծրագիրը մշակելիս օգտագործվել են հետևյալ կրթական չափորոշիչները կամ կողմնորոշիչները.

- ՀՀ որակավորումների ազգային շրջանակը՝ հաստատված ՀՀ կառավարության 2016թ. հուլիսի 7-ի N714-ն որոշմամբ,

- Երևանի պետական համալսարանի մագիստրոսի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը՝ հաստատված 2016 թ.-ին ԵՊՀ գիտական խորհրդում,
- Երևանի պետական համալսարանի առկա/հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի 2016/2017 ուսարվա ընդունելության կանոնակարգ՝ հաստատված է ԵՊՀ գիտական խորհրդի 2015թ. մարտի 31-ի նիստի № 6/5 որոշմամբ:
- Հայաստանի Հանրապետության հանրակրթության պետական կրթակարգ՝ հաստատված ՀՀ կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի N 20 որոշմամբ:
- Հանրակրթության պետական չափորոշիչ՝ հաստատված ՀՀ կառավարության 2011թ. հուլիսի 28-ի N 1088-Ն որոշմամբ:

17. Լրացուցիչ տեղեկատվություն ծրագրի վերաբերյալ

Առաջիկայում նախատեսվում է կազմակերպել սույն մասնագիտական կրթական ծրագրի հեռավար ուսուցումը:

Ծրագրի կրթական վերջնարդյունքները

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն		Բ. Գործնական մասնագիտական կարողություն	
Ա1.	վերլուծել մասնագիտության արդի հիմնախնդիրները	Բ1.	կիրառել ուսուցման ինտերակտիվ մեթոդներ ու հանդուրժողականություն սովորողների նկատմամբ
Ա2.	մեկնաբանել կրթական ժամանակակից տեխնոլոգիաները, մեթոդաբանությունը	Բ2.	դասավանդման գործընթացում օգտագործել տեխնիկական միջոցներ
Ա3.	սահմանել ուսուցման հիմնական հասկացությունները,	Բ3.	կանխատեսել ուսուցման գործընթացում հավանական խնդիրները

	հայեցակարգային մոտեցումները, տեսակետները, որոնք ընկած են մասնագիտական գործունեության հիմքում՝ հաշվի առնելով սովորողների տարիքային և հոգեբանամանկավարժական առանձնահատկությունները		թերությունները
Ա4.	դասակարգել ուսուցման ժամանակակից մեթոդիկաները և ընտրել ուսումնական առարկայի դասավանդման արդյունավետ մեթոդիկա	Բ4.	վերլուծել և համադրել մանկավարժության, հոգեբանության և մանկավարժության կապերը՝ գնահատել արդյունավետ մեթոդիկաները
Ա5.	ներկայացնել անձի ձևավորման հիմնախնդիրը՝ դիտարկելով կոնֆլիկտների հաղթահարման ուղիները տարբեր տարիքի երեխաների զարգացման գործընթացում	Բ5.	ցուցաբերել նորովի մոտեցում դաստիարակության արժեքների և տարիքային ճգնաժամերի կապերը գործընթացում
		Բ6.	կիրառել ընթացիկ և ավարտական ստուգման մասնագիտական և մեթոդական թղթապանակները

Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ

Գ1.	զարգացնել սովորողների մտային գործողությունները՝ կիրառելով ժամանակակից տեխնոլոգիաները ուսուցման գործընթացում	Գ5.	հաղորդակցվել օտար լեզվով
Գ2.	օբյեկտիվորեն գնահատել ստացած նոր տեղեկատվության որակն ու արժեքը՝ ստեղծելով միջառարկայական կապեր ուսուցման գործընթացներում	Գ6.	կիրառել ՏՀՏ-ներն ուսուցման գործընթացում
Գ3.	կիրառել ստացած գիտելիքները պրակտիկ գործունեության մեջ՝ օգտվելով տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից, համացանցային, էլեկտրոնային միջոցներից		

Գ4.	<i>արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում</i>		
-----	--	--	--

ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՔԱՐՏԵՐԸ

Մոդուլի անվանումը	Մոդուլի թվանիշը	Ծրագրի կրթական վերջնարդյունքներ													
		Ա1	Ա2	Ա3	Ա4	Ա5	Բ1	Բ2	Բ3	Բ4	Բ5	Բ6	Գ1	Գ2	
	1603														
արդի հիմնանդիրներ	1405/ՀՄ01	X		X							X				
գիտական խնդիրներում	1405/ՀՄ02							X							
անություն	1405/ՀՄ03			X		X					X				
	1603														
ավարժություն	1405/ՀՄ04			X		X									
ություն	1405/ՀՄ05			X			X		X					X	
ավարժություն	1405/ՀՄ06			X		X						X			
ն հոգեբանություն	1405/ՀՄ07			X		X					X				
լոգիաներ	1405/ՀՄ08		X					X						X	
վանդման մեթոդիկա	1405/ՀՄ09		X		X			X					X		
վանդման մեթոդիկա	1405/ՀՄ10				X		X	X							
սավանդման մեթոդիկա	1405/ՀՄ11				X		X	X							
սավանդման մեթոդիկա	1405/ՀՄ12		X		X			X					X		
վանդման մեթոդիկա	1405/ՀՄ13				X		X	X							
վանդման մեթոդիկա	1405/ՀՄ14				X		X	X							
վանդման մեթոդիկա	1405/ՀՄ15				X		X	X							
րասավանդման մեթոդիկա	1405/ՀՄ16				X		X	X							
ավանդման մեթոդիկա	1405/ՀՄ17				X		X	X							
ականության դասավանդման	1405/ՀՄ18		X		X			X					X		
վանդման մեթոդիկա	1405/ՀՄ19				X		X	X							
ավանդման մեթոդիկա	1405/ՀՄ20		X		X			X					X		

Դասընթացների նկարագրիչներ

1. 2801/ՀՄՕ 1	2. Մասնագիտության արդի հիմնախնդիրները	3. 3 կրեդիտ
4.4 Ժամ/շաբաթ	5.12 Ժամ դասախոսություն	
6. առաջին կիսամյակ	7. երկու ընթացիկ և մեկ եզրափակիչ քննություն	
<p>8. Դասընթացի նպատակն է՝</p> <ul style="list-style-type: none"> • ուսանողներին ներկայացնել այն հիմնախնդիրները, որոնք առկա են մանկավարժության մեջ, • մեկնաբանել կրթության համակարգերի զարգացման ուղիները, • մեկնաբանել կրթական նոր հարացույցները, որոնք էականորեն փոխում են ուսուցման նպատակը, բովանդակությունը, կազմակերպման ձևերն ու մեթոդները, ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունները: 		
<p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ul style="list-style-type: none"> • մեկնաբանել մանկավարժության մեջ առկա հիմնախնդիրները, • ներկայացնել մանկավարժության սկզբունքների միջև եղած տրամաբանական կապը, • գիտակցել ուսուցման մեթոդաբանությունը, <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ul style="list-style-type: none"> • վերլուծել կրթական հարացույցների դերը, • մեկնաբանել կրթության համակարգերի զարգացման տարբեր ուղիների արդյունավետությունը, • կիրառել մանկավարժության սկզբունքների դրույթներն ուսուցման 		

գործընթացում:

- մանկավարժական ցանկացած հիմնախնդրի մոտենալ վերլուծահամադրական մտածողությամբ:

- օբյեկտիվորեն գնահատել սրացած նոր տեղեկատվության որակն ու արժեքը,

10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Ա1. վերլուծել մասնագիտության արդի հիմնախնդիրները

Ա3. սահմանել ուսուցման հիմնական հասկացությունները, հայեցակարգային մոտեցումները, տեսակետները, որոնք ընկած են մասնագիտական գործունեության հիմքում՝ հաշվի առնելով սովորողների տարիքային և հոգեբանամանկավարժական առանձնահատկությունները,

Բ4. վերլուծել և համադրել մանկավարժության, հոգեբանության առկա հիմնախնդիրներում պատճառահետևանքային կապերը՝ գնահատելով ուսումնական առարկաների դասավանդման արդյունավետ մեթոդիկաները:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

- դասախոսություն,
- նյութի քննարկումներ,
- ռեֆերատների ներկայացում:

12. Գնահատման մեթոդները և չափանիշները.

▪ **1-ին ընթացիկ քննություն՝** իրականացվում է գրավոր ձևաչափով, քննական տոմսերով: Քննական տոմսում ներառված է 2 տեսական հարց՝ 2-ական միավորներով:

▪ **2-րդ ընթացիկ քննություն՝** իրականացվում է գրավոր ձևաչափով, քննական տոմսերով: Քննական տոմսում ներառված է 2 տեսական հարց՝ 2-ական միավորներով:

▪ **Եզրափակիչ քննություն՝** իրականացվում է բանավոր քննության ձևաչափով, քննական տոմսերով: Յուրաքանչյուր քննական տոմս պարունակում է 3 հարց՝

առաջին հարցը՝ 4, իսկ երկրորդ և երրորդ հարցերը՝ 3-ական միավորներով:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

- Թեմա 1. Մանկավարժությունը մարդուն ուսումնասիրող գիտությունների շարքում:
- Թեմա 2. Մանկավարժության ուսումնասիրության օբյեկտն ու առարկան:
- Թեմա 3. Մանկավարժության մեջ առկա հիմնախնդիրները:
- Թեմա 4. Մանկավարժության սկզբունքները:
- Թեմա 5. Կրթության համակարգերի զարգացման ուղիները:
- Թեմա 6. Կրթական նոր հարացույցներ:

14.Հիմնական գրականության ցանկ

- *И.В. Бордовская, А.А. Реан, Педагогика, М.,2006*
- *Г.М. Коджаспирова, Педагогика, М., 2004*
- *И.П. Подласый, Педагогика, М., 2006*
- *А.В. Хуторской, Педагогическая инноватика, М., 2008*

1. 2801/ՀՄ02	2.ՏՀՏ-ները մասնագիտական խնդիրներում	3. 3 կրեդիտ
4.4 ժամ/շաբաթ		5.12 ժամ գործնական

6.առաջին կիսամյակ	7.երկու ընթացիկ և մեկ եզրափակիչ քննություն
<p>8.Դասընթացի նպատակն է</p> <ul style="list-style-type: none"> • ձևավորել պատկերացում տվյալների հենքերի և WEB - կայքերի մասին • սովորեցնել աշխատել տվյալների հենքերի հետ MS ACCESS համակարգի օգնությամբ • սովորեցնել աշխատել WEB - կայքերի հետ՝ հիպերտեքստերի նշադրման HTML լեզվի օգնությամբ 	
<p>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ul style="list-style-type: none"> • արժևորել տվյալների հենքերի դերը մասնագիտական խնդիրներում, • նախագծել համացանցային կայքեր մասնագիտական առարկաներից, <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ul style="list-style-type: none"> • օգտագործել ուսուցման ժամանակակից տեխնիկական միջոցները դասավանդման գործընթացում, • ստեղծել մասնագիտության վերաբերյալ տվյալների հենքեր և ղեկավարել դրանք, • մշակել և ստեղծել մասնագիտական համացանցային կայքէջեր, • համադրել ուսուցման արդյունավետ կրթական տեխնոլոգիաները: <p>գ. ընդհանրական (փոխանցելի) կարողություններ</p> <ul style="list-style-type: none"> • արդյունավետորեն պլանավորել կրթական ռեսուրսները մասնագիտական գործունեության ընթացքում, • օգտագործել ստացած գիտելիքները պրակտիկայում: 	
<p>10Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</p> <p><i>Բ2. օգտագործել ուսուցման ժամանակակից դիդակտիկ և տեխնիկական միջոցները դասավանդման գործընթացում,</i></p> <p><i>Գ3. կիրառել ստացած գիտելիքները պրակտիկ գործունեության մեջ՝ օգտվելով</i></p>	

տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից, համացանցային, էլեկտրոնային միջոցներից,

Գ6. կիրառելի ՏՀՏ-ներն ուսուցման գործընթացում:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

- գործնական առաջադրանքներ, նախագծային մեթոդ, համագործակցային, խմբային ուսուցում

12. Գնահատման մեթոդները և չափանիշները.

41-ին ընթացիկ քննություն՝ իրականացվում է գրավոր ձևաչափով, քննական տոմսերով: Քննական տոմսում ներառված է 1 տեսական, 1 գործնական հարց՝ 2-ական միավորներով:

52-րդ ընթացիկ քննություն՝ իրականացվում է գործնական ներկայացման միջոցով: Սովորողները, նախապես ընտրված թեմաներից, ներկայացնում են ռեֆերատներ՝ շարժասահիկների ուղեկցությամբ:

6 եզրափակիչ քննություն՝ իրականացվում է բանավոր քննության ձևաչափով՝ քննական տոմսերով: Յուրաքանչյուր քննական տոմս պարունակում է 3 հարց՝ առաջին հարցը՝ 4, իսկ երկրորդ և երրորդ հարցերը 3-ական միավորներով:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

7 Տվյալների ղեկավարման համակարգեր: Դրանց հիմնական կիրառությունները:

8 Տվյալների հենքեր, դասակարգումը:

9 Տվյալների ղեկավարման Ms Access համակարգը և հիմնական գործառնությունը:

10 Տվյալների, հարցումների կազմակերպումը և ղեկավարումը Ms Access համակարգում:

11 Հիպերտեքստների նշադրման HTML լեզու:

12 Մասնագիտական կայքերի նախագծում HTML լեզվով:

13 Կայքերի ոճավորում: Ձևաչափում:

14. Հիմնական գրականության ցանկ

14 Մանուկյան Մ. Գ., *Տվյալների բազաների համակարգերի ներածություն: Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2005*

15 К. Дейт. *Введение в системы баз данных. 6-е изд., М.; 2000*

16 Joan Lambert, Joyce Cox, *Microsoft Access 2013 Step by Step. // Online Training Solutions, Inc., 2015*

17 Elizabeth Castro, Bruce Hyslop, *HTML and CSS: Visual QuickStart Guide / Edition 8. // Peachpit Press, 2013*

1.2801/ՀՄ04	22. Ընդհանուր մանկավարժություն	2. 3 կրեդիտ
3.4 ժամ/շաբաթ	4.12 ժամ դասախոսություն	
5. առաջին կիսամյակ	6. երկու ընթացիկ և մեկ եզրափակիչ քննություն	
<p>7. Դասընթացի նպատակն է</p> <ul style="list-style-type: none"> • սովորողներին ներկայացնել ընդհանուր մանկավարժության նպատակը, խնդիրները, մանկավարժության հասկացությունները, հիմնական գիտաճյուղերը, • ներկայացնել անձի ձևավորման հիմնախնդիրը: 		
<p>8. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ul style="list-style-type: none"> • սահմանել մանկավարժության հիմնական հասկացությունները, • ներկայացնել անձի ձևավորման հիմնախնդիրը, • դասակարգել մանկավարժության առաջադիր խնդիրները մարդու մասին գիտությունների շարքում, • քննարկել ուսուցման և դաստիարակության հիմնական մեթոդները, ձևերն ու 		

միջոցները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

- համեմատել տարբեր մանկավարժ-տեսաբանների մոտեցումները մանկավարժության հիմնական հասկացությունների վերաբերյալ,
- փաստարկել անձի ձևավորման հիմքում ընկած հիմնական գործոնների հարաբերակցությունը,
- արժևորել և գնահատել մանկավարժության նշանակությունն անձի ձևավորման և զարգացման գործում,
- կանխատեսել ուսուցման գործընթացում հավանական և սպասվելիք արդյունքներն ու թերությունները:

գ. ընդհանրական (փոխանցելի) կարողություններ

- գնահատել ստացած նոր տեղեկատվության որակն ու արժեքը,
- վերլուծել անձի սոցիալականացման գործոնները:

9. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Ա3. սահմանել ուսուցման հիմնական հասկացությունները, հայեցակարգային մոտեցումները, տեսակետները, որոնք ընկած են մասնագիտական գործունեության հիմքում՝ հաշվի առնելով սովորողների տարիքային և հոգեբանամանկավարժական առանձնահատկությունները,

Ա5. ներկայացնել անձի ձևավորման հիմնախնդիրը՝ դիտարկելով կոնֆլիկտների հաղթահարման ուղիները տարբեր տարիքի երեխաների զարգացման գործընթացում:

Գ4. արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

- դասախոսություն՝ շարժասահիկների ուղեկցությամբ

12.Գնահատման մեթոդները և չափանիշները.

51-ին ընթացիկ քննություն՝ իրականացվում է գրավոր ձևաչափով, քննական տոմսերով: Քննական տոմսում ներառված է 2 տեսական հարց՝ 2-ական միավորներով:

62-րդ ընթացիկ քննություն՝ իրականացվում է գործնական ներկայացման միջոցով: Սովորողները, նախապես ընտրված թեմաներից, ներկայացնում են ռեֆերատներ՝ շարժասահիկների ուղեկցությամբ:

7 եզրափակիչ քննություն՝ իրականացվում է բանավոր քննության ձևաչափով՝ քննական տոմսերով: Յուրաքանչյուր քննական տոմս պարունակում է 3 հարց՝ առաջին հարցը՝ 4, իսկ երկրորդ և երրորդ հարցերը 3-ական միավորներով:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

- *Ընդհանուր մանկավարժության նպատակը, խնդիրները:*
- *Ընդհանուր մանկավարժության հիմնական հասկացությունները և կապն այլ գիտությունների հետ:*
- *Մանկավարժության հիմնական գիտաճյուղերը:*
- *Անձ: Անձի ձևավորում: Գործոններ: Սոցիալականացում:*
- *Դաստիարակություն: Դաստիարակության հիմնական սկզբունքները, մեթոդները և ձևերը:*

14.Հիմնական գրականության ցանկ

- *Ամիրջանյան Յու.Ա., «Մանկավարժություն», Երևան, 2005*
- *Ղույումջյան Գ.Ե., Մանկավարժություն, Երևան, 2005*
- *Педагогика: учебник для бакалавров / Л. П. Крившенко; под ред. Л. П. Крившенко, Москва, 2013.*
- *Коджаспирова Г.М. Педагогика: учебник / Г.М. Коджаспирова. М., 2010*
- *Ковалева Е.В. История педагогики и образования: учеб. метод. пособие, 2013*

2801/ՀՄ08	2.Կրթական տեխնոլոգիաներ	3. 3 կրեդիտ
4.4 ժամ/շաբաթ	5.6 ժամ դասախոսություն 5 ժամ սեմինար	
.երկրորդ կիսամյակ	6 երկու ընթացիկ և մեկ եզրափակիչ քննություն	
<p>7 Դասընթացի նպատակն է</p> <ul style="list-style-type: none"> • սովորողներին ներկայացնել ավանդական և ժամանակակից կրթական տեխնոլոգիաները, • ծանոթացնել ժամանակակից կրթական տեխնոլոգիաների կիրառման հիմնական սկզբունքներին և ձևերին: 		
<p>8 Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ul style="list-style-type: none"> • սահմանել կրթական տեխնոլոգիա, մանկավարժական տեխնոլոգիա, ուսուցման տեխնոլոգիա հասկացությունները, • մեկնաբանել կրթական տեխնոլոգիաներն ուսուցման գործընթացում, • դասակարգել ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները և մեթոդիկաները: <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ul style="list-style-type: none"> • օգտագործել ուսուցման ժամանակակից դիդակտիկ և տեխնիկական միջոցները դասավանդման գործընթացում, • մասնագիտական գործունեության ընթացքում կիրառել կրթական ժամանակակից տեխնոլոգիաներ • համադրել ուսուցման արդյունավետ կրթական տեխնոլոգիաները <p>գ. ընդհանրական (փոխանցելի) կարողություններ</p> <ul style="list-style-type: none"> • արդյունավետորեն պլանավորել կրթական ռեսուրսները մասնագիտական 		

գործունեության ընթացքում:

9 Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Ա2. մեկնաբանել կրթական ժամանակակից տեխնոլոգիաները,
մեթոդաբանությունը,

Բ2. օգտագործել ուսուցման ժամանակակից դիդակտիկ և տեխնիկական
միջոցները դասավանդման գործընթացում,

Գ1. զարգացնել սովորողների մտային գործողությունները՝ կիրառելով
ժամանակակից տեխնոլոգիաները ուսուցման գործընթացում,

Գ4. արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ
խմբային նախագծերում:

10 Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

- դասախոսություն՝ շարժասահիկների ուղեկցությամբ
- սեմինար պարապմունք, դերային խաղեր, գործնական առաջադրանքներ

11 Գնահատման մեթոդները և չափանիշները.

41-ին ընթացիկ քննություն՝ իրականացվում է գրավոր ձևաչափով, քննական
տոմսերով: Քննական տոմսում ներառված է 2 տեսական հարց՝ 2-ական
միավորներով:

52-րդ ընթացիկ քննություն՝ իրականացվում է գործնական ներկայացման
միջոցով: Սովորողները, նախապես ընտրված թեմաներից, ներկայացնում են
ռեֆերատներ՝ շարժասահիկների ուղեկցությամբ:

6 Եզրափակիչ քննություն՝ իրականացվում է բանավոր քննության ձևաչափով՝
քննական տոմսերով: Յուրաքանչյուր քննական տոմս պարունակում է 3 հարց՝
առաջին հարցը՝ 4, իսկ երկրորդ և երրորդ հարցերը՝ 3-ական միավորներով:

12 Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

*7 Կրթական, մանկավարժական և ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները:
Հիմնական հասկացությունները:*

8 Ուսումնական գործընթացի ակտիվացում:

9 Ուսուցման ինտենսիվացման տեխնոլոգիաները:

10 Ուսուցման ակտիվ, ինտերակտիվ տեխնոլոգիաներ:

11 Մրավոր գործունեության ակտիվացման տեխնոլոգիաներ:

12 Ակտիվ ուսուցման համակարգային տեխնոլոգիաներ:

13 Խաղը որպես ուսուցման ինտերակտիվ տեխնոլոգիա: Գործարար խաղեր:

14 Դերային խաղերի կազմակերպման տեխնոլոգիաները:

*15 Կառուցողական մեթոդաբանություն: Ըմբռնելու և յուրացման
տեխնոլոգիաներ:*

*16 Համագործակցային ուսումնառությանը և ստեղծագործական
մտածողությանը նպաստող տեխնոլոգիաներ*

13 Հիմնական գրականության ցանկ

*17 Պետրոսյան Հ. Հ., Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ:
Մոդուլային ուսումնական ձեռնարկ: Երևան, 2012*

*18 Мухина С.А., Соловьева А.А. Современные инновационные технологии обучения.
М., 2008*

*19 Панфилова А.П. Игровое моделирование в деятельности педагога: учебное
пособие для студ./ под. Ред. В.А. Слостенина, И.А. Колесниковой. М., 2006*

*20 Селевко Г.К. Современные образовательные технологии: учебное пособие. М.:
Народное образование, 1998*

1.2801/ՀՄ12	2.Գերմաներենի դասավանդման մեթոդիկա	3.5կրեդիտ
4.8 ժամ/շաբաթ	5.12 ժամ դասախոսություն 12 ժամ գործնական/սեմինար	
5 երկրորդ կիսամյակ	6 երկու ընթացիկ և մեկ եզրափակիչ քննություն	
<p>7 Դասընթացի նպատակն է</p> <ul style="list-style-type: none"> • սովորողներին ծանոթացնել գերմաներենի դասավանդման մեթոդիկայի ձևավորմանը, զարգացման պատմությանը, • բացահայտել տեսությունների զարգացման միտումները, մեթոդները, • հիմնավորել ժամանակակից սկզբունքների, ռազմավարությունների, տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը, • ներկայացնել գնահատման համակարգերը և դրանց կիրառման դաշտը, հասցեատիրոջը, ուսուցման օբյեկտներին և սուբյեկտներին 		
<p>8 Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ul style="list-style-type: none"> • ներկայացնել գերմաներենի դասավանդման մեթոդիկայի նպատակը, խնդիրները, մեթոդների պատմությունը. • հիմնավորել հաղորդակցական մեթոդների արդյունավետությունը, • բացահայտել գերմաներենի դասավանդման մեթոդիկայի ուսուցման, ուսումնառության առանձնահատկությունները, օրինաչափությունները, • կիրառել համապատասխան մեթոդներ, առաջադրանքներ, վարժություններ գերմաներենի ուսուցման գործընթացում: <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ul style="list-style-type: none"> • համեմատել ավանդական, դասական և այլընտրանքային օտար լեզուների դասավանդման մեթոդները և հիմնավորել հաղորդակցական մոտեցման 		

կիրառման արդյունավետությունը,

- ներկայացնել ընկալողական և արտադրողական կարողությունները և հմտությունները ըստ ընկալողական, նախախոսքային և խոսքային վարժությունների և առաջադրանքների,
- գործնականում, ըստ ուսումնական իրավիճակի ընտրել բովնդակության կամ առաջադրանքի վրա հիմնված առաջադրանքներ
- ստեղծել գերմաներենից ընթացիկ և ավարտական ստուգման թեստեր՝ ըստ մոդելի կամ ցուցանմուշի:

9 Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Ա2. մեկնաբանել կրթական ժամանակակից տեխնոլոգիաները,

մեթոդաբանությունը,

Ա4. դասակարգել ուսուցման ժամանակակից մեթոդիկաները և ընտրել

գերմաներենի դասավանդման արդյունավետ մեթոդիկա,

Բ2. օգտագործել ուսուցման ժամանակակից դիդակտիկ և տեխնիկական

միջոցները գերմաներենի դասավանդման գործընթացում,

Բ6. կիրառել ընթացիկ և ավարտական ստուգման և գնահատման գործընթացում

մասնագիտական և մեթոդական թղթապանակներ,

Գ3. կիրառել ստացած գիտելիքները պրակտիկ գործունեության մեջ՝ օգտվելով

տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից, համացանցային, էլեկտրոնային

միջոցներից,

Գ5. հաղորդակցվել օտար լեզվով:

10 Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

- դասախոսություն՝ շարժասահիկների ուղեկցությամբ
- սեմինար պարապմունքներ, գործնական առաջադրանքներ

11 Գնահատման մեթոդները և չափանիշները.

21 **1-ին ընթացիկ քննություն**՝ իրականացվում է գործնական ներկայացման միջոցով: Սովորողները, նախապես ընտրված թեմաներից, ներկայացնում են ռեֆերատներ՝ շարժասահիկների ուղեկցությամբ:

22 **2-րդ ընթացիկ քննություն**՝ իրականացվում է գործնական առաջադրանքներ հարցապտմներով: Հարցապտմը պարունակում է 2 հարց, որից 1-ինը՝ տեքստի թարգմանություն, իսկ 2-րդը՝ գործնական վարժություն՝ յուրաքանչյուրը 2-ական միավորներով:

23 **Եզրափակիչ քննություն**՝ իրականացվում է բանավոր քննության ձևաչափով՝ քննական տոմսերով: Յուրաքանչյուր քննական տոմս պարունակում է 3 հարց՝ առաջին հարցը՝ 4, իսկ երկրորդ և երրորդ հարցերը՝ 3-ական միավորներով:

12 Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

- Գերմաներեն լեզվի դասավանդումը որպես գիտություն: Գերմաներենի դասավանդման նպատակը որպես հանրամանկավարժական և մեթոդական կարգ:
- Գերմաներենի ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդները՝ քերականական-թարգմանական, ուղիղ, տեսալսողական, հաղորդակցական:
- Գերմաներենի հնչյունաբանության ուսուցում:
- Գերմաներենի բառապաշարի ուսուցում:
- Գերմաներենի քերականության ուսուցում:
- Պրոդուկտիվ և ռեցեպտիվ քերականություն:
- Քերականական նյութի մատուցման մեթոդներ:
- Բանավոր հաղորդակցման (ունկնդրելը, խոսելը՝ մենախոսություն, երկխոսություն) ուսուցում:
 - Խոսելը՝ մտքերը բանավոր արտահայտելը (մենախոսություն, երկխոսություն) որպես վերարտադրողական (պրոդուկտիվ) խոսքային գործունեության տեսակ:
 - Մենախոսության ուսուցում:

- Երկխոսության ուսուցում:
- Միջմշակութային ուսուցում:
- Գրավոր հաղորդակցում (ընթերցելը, գրելը):
- Ընթերցանության ուսուցման արդյունավետությունն ապահովող մեխանիզմներ:
- Ընթերցանության տեսակների (թռուցիկ, ընդհանուր բովանդակության ընկալման, որոնողական, մանրազնին) դասակարգում:
- Ընթերցանության տեխնիկայի ուսուցում:
- Ընթերցանության տարբեր տեսակների մակարդակների բնութագրում:
- Ընթերցանության տեսակների ձևավորման մեթոդներ ու ռազմավարություններ:
- Տեքստերի բովանդակության ընկալման ստուգում:
- Գրավոր խոսքի ուսուցում:
- Գրավոր խոսքի ուսուցման նպատակները:
- Գրելու տեխնիկա (տառուսուցում, ուղղագրություն) և գրավոր խոսքի (մտքերը գրավոր արտահայտելու) կարողություն:
- Վարժությունների համակարգ՝ ուղղված գրելու տեխնիկայի և գրավոր խոսքի հմտությունների ու կարողությունների զարգացմանը:
- Գրավոր խոսքի ստուգման ձևերը:
- Խոսքային կարողությունների ստուգման այլընտրանքային ձևեր:
- Գերմաներենի ուսուցումը մշակույթների երկխոսության համատեքստում:

13 Հիմնական գրականության ցանկ

- Dieling Helga / Hirschfeld Ursula, *Phonetik lehren und lernen*, München, 2000
- Ehlers Franz, *Lesen als Verstehen. Zum Verstehen fremdsprachlicher literarischer Texte und zu ihrer Didaktik*, München, 1992
- Göbel Heinz, *Ausspracheschulung Deutsch*, Bonn, 1991
- Meyer Hilbert, *Unterrichtsmethoden*, Frankfurt am Main, 1987
- Neuner Gerhard / Hundfeld Hans, *Methoden des fremdsprachlichen*

Deutschunterrichts, Eine Einführung, Berlin, 1993

- *Vogt Rüdiger/ Becker-Mrotzek Michael, Unterrichtskommunikation, Tübingen, 2009*
- *Westhoff Gerard, Didaktik des Leseverstehend: Strategien des voraussagenden Lesens mit Übungsprogrammen, München, 1987*

1.2801/ՀՄ16	2.Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա	3. 6 կրեդիտ
4.8 ժամ/շաբաթ	5.12 ժամ դասախոսություն 12 ժամ գործնական/սեմինար	
5 երկրորդ կիսամյակ	6 երկու ընթացիկ և մեկ եզրափակիչ քննություն	
<p>7 Դասընթացի նպատակն է</p> <ul style="list-style-type: none"> • սովորողներին ներկայացնել մաթեմատիկայի դասավանդման հիմնական մեթոդիկայի կարևորագույն բաժինները, ուսուցման չափորոշչային արդյունքների պլանավորման հիմնախնդիրը, • ծանոթացնել մաթեմատիկայի ուսումնամեթոդական փաթեթին, մաթեմատիկայի դասի տիպերին: 		
<p>8 Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և հմացություն</p> <ul style="list-style-type: none"> • վերհիշել մաթեմատիկա գիտության, միջնակարգ դպրոցի «մաթեմատիկա» բնագավառի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի բնութագրումները, • թվարկել մաթեմատիկայի դիդակտիկական սկզբունքները, • անվանել և ընտրել մաթեմատիկայի գիտական ճանաչման մեթոդները, • վերարտադրել և ընտրել մաթեմատիկայի ուսուցման ավանդական մեթոդները և ուսուցման ժամանակակից՝ փոխներգործուն և համագործակցային ուսուցման 		

տեխնոլոգիաները,

- ընտրել մաթեմատիկական պնդումների ապացուցման արդյունավետ մեթոդները, գրանցել և անվանել ապացուցման քայլերը,
- նկարագրել մաթեմատիկայի դասի տիպերը, կառուցվածքը և մեթոդապես ճիշտ ընտրել կոնկրետ թեմայի ուսուցման նպատակներն ու մեթոդները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

- գնահատել ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդները համեմատության մեջ, ընտրել նպատակահարմար մեթոդը և ցուցադրել դրա գործնականում կիրառելու հնարավորությունը,
- գործնականում իրականացնել դասի պլանավորումը, ճիշտ կառուցել դասի նպատակը, կանխատեսել դասի ակադեմիական և սոցիալական նպատակները, բացահայտել ուսուցման նպատակահարմար մեթոդը,
- գնահատել և գործնականում իրականացնել մաթեմատիկայի դիդակտիկական սկզբունքները, գիտական հետազոտման մեթոդները /մեթոդների կոմպլեկտը/,
- կանխատեսել և գործնականում իրականացնել ապացուցման մեթոդների կիրառությունները:

9.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Ա4. դասակարգել ուսուցման ժամանակակից մեթոդիկաները և ընտրել մաթեմատիկայի դասավանդման արդյունավետ մեթոդիկա,

Բ1. կիրառել ուսուցման ինտերակտիվ մեթոդներ մաթեմատիկայի ուսուցման գործընթացում՝ ցուցաբերելով հանդուրժողականություն սովորողների նկատմամբ,

Բ2. օգտագործել ուսուցման ժամանակակից դիդակտիկ և տեխնիկական միջոցները մաթեմատիկայի դասավանդման գործընթացում:

9. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

- Դասախոսություն,
- գործնական աշխատանքներ՝ ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ

10. Գնահատման մեթոդները և չափանիշները.

24 **1-ին ընթացիկ քննություն՝** իրականացվում է գրավոր՝ քննական տոմսերով: Քննական տոմսում ներառված է 1 տեսական, 1 գործնական հարց՝ 2-ական միավորներով:

25 **2-րդ ընթացիկ քննություն՝** իրականացվում է գրավոր, քննական տոմսերով: Քննական տոմսում ներառված է 2 գործնական առաջադրանք՝ 2-ական միավորներով:

26 **Եզրափակիչ քննություն՝** իրականացվում է բանավոր՝ քննական տոմսերով: Քննական յուրաքանչյուր տոմս պարունակում է 3 հարց՝ առաջին և երկրորդ հարցերը՝ 3-ական, իսկ երրորդ հարցը (գործնական առաջադրանք)՝ 4 միավոր արժեքներով:

11. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

- Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի առարկան:
- Մաթեմատիկայի ուսուցման դիդակտիկական սկզբունքները:
- Գիտական ճանաչողության մեթոդները մաթեմատիկայում և նրա ուսուցման գործընթացում:
- Մաթեմատիկայի ուսուցման ավանդական մեթոդները և փոխներգործուն ու համագործակցային ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները:
- Մաթեմատիկական հասկացությունների սահմանումների տեսակները, կոռեկտ և ոչ կոռեկտ սահմանումներ, դրանց դասավանդման մեթոդիկան:
- Ապացուցումների դասավանդման մեթոդիկա:
- Մաթեմատիկայի ուսուցման կազմակերպման հիմնական ձևերը:
- Սովորողների գիտելիքների և կարողությունների գնահատման ՀՀ միջնակարգ

հանրակրթական դպրոցում ներկայումս գործող համակարգի վերլուծություն:

- Մաթեմատիկայի ուսուցչի նախապատրաստվելը դասին, դասի վերլուծություն:

11. Հիմնական գրականության ցանկ

- Այվազյան Է. Ի. Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա, Երևան, 2016
- Саранцев Г. И. Обучение математическим доказательствам в школе, М., 2000
- Саранцев Г. И. Методика обучения математике в ср. школе, М., 2002
- Столяр А. А. Педагогика математики. Курс лекций, М., 1974
- Метельский Н. В., Дидактика математики, М., 1982
- Репьев В.В., Общая методика преподавания математике, М., 1958

2801/ՀՄ20	2.Ֆրանսերենի դասավանդման մեթոդիկա	3. 7 կրեդիտ
4. 8 ժամ/շաբաթ	5.12 ժամ դասախոսություն 12 ամ գործնական/սեմինար	
7.երկրորդ կիսամյակ	8. երկու ընթացիկ և մեկ եզրափակիչ քննություն	
<p>9. Դասընթացի նպատակն է</p> <ul style="list-style-type: none"> • սովորողներին ծանոթացնել ֆրանսերենի դասավանդման մեթոդիկայի ձևավորմանը, զարգացման պատմությանը, • բացահայտել տեսությունների զարգացման միտումները, մեթոդները, • հիմնավորել ժամանակակից սկզբունքների, ռազմավարությունների, տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը, 		

- ներկայացնել գնահատման համակարգերը և դրանց կիրառման դաշտը, հասցեատիրոջը, ուսուցման օբյեկտներին և սուբյեկտներին:

10. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

- ներկայացնել ֆրանսերենի դասավանդման մեթոդիկայի նպատակը, խնդիրները և հիմնարար սկզբունքները
- բացահայտել ֆրանսերենի դասավանդման մեթոդիկայի ուսուցման, ուսումնառության առանձնահատկությունները, օրինաչափությունները,
- լուսաբանել ֆրանսերենի ուսուցման տվյալ փուլի խնդիրներին համապատասխան մեթոդները, առաջադրանքները, վարժությունները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

- համեմատել ավանդական, դասական և այլընտրանքային օտար լեզուների դասավանդման մեթոդները և հիմնավորել հաղորդակցական մոտեցման կիրառման արդյունավետությունը,
- տարբերակել ընկալողական և արտադրողական կարողությունները և հմտությունները ըստ ընկալողական, նախախոսքային և խոսքային վարժությունների և առաջադրանքների,
- ընտրել ուսումնական իրավիճակին համապատասխան առաջադրանքներ
- կազմել ընթացիկ և ավարտական ստուգման թեստեր ըստ մոդելի կամ ցուցանմուշի:

11. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

- Ա2. մեկնաբանել կրթական ժամանակակից տեխնոլոգիաները, մեթոդաբանությունը,
- Ա4. դասակարգել ուսուցման ժամանակակից մեթոդիկաները և ընտրել

Ֆրանսերենի դասավանդման արդյունավետ մեթոդիկա,

Բ2. օգտագործել ուսուցման ժամանակակից դիդակտիկ և տեխնիկական միջոցները ֆրանսերենի դասավանդման գործընթացում,

Բ6. կիրառել ընթացիկ և ավարտական ստուգման և գնահատման գործընթացում մասնագիտական և մեթոդական թղթապանակներ,

Գ3. կիրառել սրացած գիտելիքները պրակտիկ գործունեության մեջ՝ օգտվելով տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից, համացանցային, էլեկտրոնային միջոցներից,

Գ5. հաղորդակցվել օտար լեզվով:

10. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

- դասախոսություն՝ շարժասահիկների ուղեկցությամբ
- սեմինար պարապմունքներ, գործնական առաջադրանքներ

11. Գնահատման մեթոդները և չափանիշները.

27 **1-ին ընթացիկ քննություն**՝ իրականացվում է գործնական ներկայացման միջոցով: Սովորողները, նախապես ընտրված թեմաներից, ներկայացնում են ռեֆերատներ՝ շարժասահիկների ուղեկցությամբ:

28 **2-րդ ընթացիկ քննություն**՝ իրականացվում է գործնական առաջադրանքներ հարցատրամսերով: Հարցատրամսը պարունակում է 2 հարց, որից 1-ինը՝ տեքստի թարգմանություն, իսկ 2-րդը՝ գործնական վարժություն՝ յուրաքանչյուրը 2-ական միավորներով:

29 **Եզրափակիչ քննություն**՝ իրականացվում է բանավոր քննության ձևաչափով՝ քննական տրամսերով: Յուրաքանչյուր քննական տրամս պարունակում է 3 հարց՝ առաջին հարցը՝ 4, իսկ երկրորդ և երրորդ հարցերը՝ 3-ական միավորներով:

12. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

- Օտար լեզուների դասավանդումը որպես գիտություն: Օտար լեզուների

դասավանդման նպատակը որպես հանրամանկավարժական և մեթոդական կարգ:

- Օտար լեզուների ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդները՝ քերականական-թարգմանական (grammar-translation), ուղիղ (direct), տեսալսողական (audiovisual), հաղորդակցական (communicative):

- Ֆրանսերենի հնչյունաբանության ուսուցում:

- Ֆրանսերենի բառապաշարի ուսուցում:

- Ֆրանսերենի քերականության ուսուցում:

- Պրոդուկտիվ և ռեցեպտիվ քերականություն:

- Քերականական նյութի մատուցման մեթոդներ:

- Բանավոր հաղորդակցման (ունկնդրելը, խոսելը՝ մենախոսություն, երկխոսություն) ուսուցում:

- Մենախոսության ուսուցում:

- Երկխոսության ուսուցում:

- Գրավոր խոսքի ուսուցում:

- Ընթերցանության ուսուցում:

- Տեքստերի բովանդակության ընկալման ստուգում:

- Վարժությունների համակարգ՝ ուղղված գրելու տեխնիկայի և գրավոր խոսքի հմտությունների ու կարողությունների զարգացմանը:

- Խոսքային կարողությունների ստուգման այլընտրանքային ձևեր:

- Օտար լեզուների ուսուցումը միջմշակութային հաղորդակցության համատեքստում:

14. Հիմնական գրականության ցանկ

- Հայաստանի Հանրապետության լեզվակրթական քաղաքականության ուրվագիծ, Ազգային զեկույց, Երևան, 2008

- Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ. ուսումնառություն, դասավանդում, գնահատում: Ծրագրի ղեկավար՝ Ս. Զոլյան, Թարգմ.

' U. Կարախանյան և ուրիշ., ԽՍՏՔ. ' Սուրեն Զոյան, Մելանյա Ասրվաճաղրյան և ուրիշ., Եր., 2005

- *Activités Pour Le Cadre Européen Commun De Référence- Niveau B1, - Marie-Louise Parizet, Etiane Grandet, Martine Corsain, CLE, 2007*
- *Activités Pour Le Cadre Européen Commun De Référence- Niveau B2, - Etiane Grandet, Martine Corsain, Elettra Mineni, Mariella Rainoldi, CLE, 2007*
- *Didactique du français, Fondements d'une discipline, Jean-Louis Chiss, Jacques David, Yves Reuter, Boeck Supérieur, 2008*
- *La didactique du français, Que sais-je, Jean-Maurice Rosier, PUF, 2002*
- *L'apprentissage coopératif: Origines et évolutions d'une méthode pédagogique, Alain Baudrit, Boeck Supérieur, 2007*
- *Grammaire progressive du français, perfectionnement, Maïa Grégoire, Alina Kostucki, CLE, 2015*
- *Compréhension orale B1+/B2, Michèle Barféty, CLE, 2007*
- *Compréhension écrite B1/B1+, Michèle Barféty, CLE, 2007*
- *Compréhension orale B2/C1, Michèle Barféty, CLE 2010*

1. 2801/ՀՄ 09	2. Աշխարհագրության դասավանդման մեթոդիկա	3. 6 կրեդիտ
4. 8 ժամ/շաբաթ	5. 12 ժամ դասախոսություն 12 ժամ սեմինար	
6. Երկրորդ կիսամյակ	7. Երկու ընթացիկ և մեկ եզրափակիչ քննություն	
8. Դասընթացի նպատակն է՝ <ul style="list-style-type: none"> • հաղորդել գիտելիքներ հանրակրթական և մասնագիտացված դպրոցներում աշխարհագրություն առարկայի դասավանդման խնդիրների և մեթոդաբանության վերաբերյալ, 		

- ծանոթացնել աշխարհագրություն դասընթացի ուսուցման մեթոդների հիմնական տեսակներին և ձևերին:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

- սահմանել աշխարհագրության դասավանդման հիմնական հասկացությունները,
- մեկնաբանել կրթական ժամանակակից տեխնոլոգիաները աշխարհագրության դասավանդման գործընթացում,
- գնահատել և արժևորել ուսուցման ժամանակակից մեթոդիկաները աշխարհագրության դասավանդման գործընթացում,
- հիմնավորել աշխարհագրության դերը մարդ, բնություն, հասարակություն ուսումնասիրող գիտությունների շարքում
- ընտրել աշխարհագրության ուսուցանման արդյունավետ մեթոդիկա

բ. գործնական մասնագիտական կարողություններ

- պլանավորել աշխարհագրություն առարկայի ուսումնական պարապմունքները,
- օգտագործել ուսուցման ժամանակակից դիդակտիկ և տեխնիկական միջոցները աշխարհագրության դասավանդման գործընթացում
- իրականացնել աշխարհագրության դասավանդման մեթոդների օպտիմալ ընտրություն,
- իրականացնել աշխարհագրության դասերի ժամանակ աշակերտների գիտելիքների, հմտությունների յուրացման վերահսկում,
- համեմատել ավանդական, դասական և այլընտրանքային դասավանդման մեթոդները աշխարհագրություն դասավանդելիս

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ (եթե այդպիսիք կան)

- ստեղծել միջառարկայական կապեր աշխարհագրության ուսումնառության ընթացքում
- կիրառել ստացած գիտելիքները պրակտիկ գործունեության մեջ:

10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

Ա4. դասակարգել ուսուցման ժամանակակից մեթոդիկաները և ընտրել աշխարհագրության դասավանդման արդյունավետ մեթոդիկա,

Բ1. կիրառել ուսուցման ինտերակտիվ մեթոդներ աշխարհագրության ուսուցման գործընթացում՝ ցուցաբերելով հանդուրժողականություն սովորողների նկատմամբ,

Բ2. օգտագործել ուսուցման ժամանակակից դիդակտիկ և տեխնիկական միջոցները աշխարհագրության դասավանդման գործընթացում:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

- դասախոսություն՝ շարժասահիկների ուղեկցությամբ
- գործնական պարապմունքներ

12. Գնահատման մեթոդները և չափանիշները.

▪ **1-ին ընթացիկ քննություն**՝ իրականացվում է գրավոր ձևաչափով, քննական տոմսերով: Քննական տոմսում ներառված է 1 տեսական, 1 հորձնական հարց՝ 2-ական միավորներով:

▪ **2-րդ ընթացիկ քննություն**՝ իրականացվում է գործնական ներկայացման միջոցով: Սովորողները, նախապես ընտրված թեմաներից, ներկայացնում են ռեֆերատներ՝ շարժասահիկների ուղեկցությամբ:

▪ **Եզրափակիչ քննություն**՝ իրականացվում է բանավոր քննության ձևաչափով՝ քննական տոմսերով: Յուրաքանչյուր քննական տոմս պարունակում է 3 հարց՝ առաջին հարցը՝ 4, իսկ երկրորդ և երրորդ հարցերը 3-ական միավորներով:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

- Դասավանդման մեթոդիկայի առարկան և նրա խնդիրները:
- Աշխարհագրության դասընթացի կառուցման հիմնական ձևերը:
- Աշխարհագրության ուսուցման մասնավոր մեթոդներ:
- Դպրոցներում աշխարհագրության ուսումնական առարկայի բովանդակության սկզբունքները:
- Միջառարկայական կապերի հաստատում:
- Բնության և հասարակության, տարածաշրջանների, Հայաստանի մասին ուսումնական ծրագրի կառուցում և դասավանդում:
- Աշխարհագրության դասավանդման նյութական բազայի ստեղծում:

14. Հիմնական գրականության ցանկ.

- Խ. Սարգսյան Աշխարհագրության դասավանդման մեթոդիկա, Եր., «Ձանգակ-97», 2002
- Ա. Հովսեփյան, Գ. Հովհաննիսյան և ուրիշ. Աշխարհագրություն 7-8. Ուսուցչի ձեռնարկ, Եր., 2013
- Ա. Հովսեփյան, Գ. Հովհաննիսյան, Խ. Սարգսյան Աշխարհագրություն: Ուսուցչի

ձեռնարկ: 10-12-րդ դասարաններ, Եր., 2010

- Գ. Հովհաննիսյան, Մ. Իսկանդարյան Աշխարհագրություն 6. Ուսուցչի ձեռնարկ, Եր., 2007
- Աշխարհագրության ընթացիկ գնահատման առաջադրանքների նմուշների ժողովածու /հեղ. Մ. Մանասյան, Ս. Սուվարյան և ուրիշ./, Եր., 2007
- Գ. Հովհաննիսյան, Մ. Ղուկասյան Աշխարհագրություն. թեստային առաջադրանքների ժողովածու, 1-ին, 2-րդ և 3-րդ մասեր Եր., «Ձանգակ-97», 2009, 2010, 2011
- Գ. Հովհաննիսյան, Վ. Գրիգորյան Դպրոցական օլիմպիադաներ. Աշխարհագրություն, Եր., 2013
- *Методика обучения географии в средней школе / Под. ред. Л.М. Панчешниковой. М. 2001*
- *Душина И.В. Методика обучения географии в общеобразовательных учреждениях. М., 2007*
- *Петрова Е.Ю. Теория и методика обучения географии. Томск, 2010*
- *Максаковский В. П. “Географическая культура”, М. “Владос”, 1998.*
- *Практикум по методике преподавания географии, под. ред. Таможней, М. 2008*
- Աշխարհագրության գործող դասագրքեր
- www.amedu.am, www.atc.am, www.edu.am, www.aniedu.am

1.2801/ՀՄ10	23. Աստվածաբանության դասավանդման մեթոդիկա	2. 5 կրեդիտ
3. 8 ժամ/շաբաթ	6 12 ժամ դասախոսություն 12 ժամ սեմինար	
7 երկրորդ կիսամյակ	8 երկու ընթացիկ և մեկ եզրափակիչ քննություն	

9 Առարկայի նպատակն է

- ուսանողներին ծանոթացնել աստվածաբանության դասավանդման մեթոդներին,
- դպրոցներում դասավանդվող «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի շրջանակներում քննարկել դասավանդվող նյութը, այն պատրաստել կրթական չափանիշների համաձայն:

10 Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

- սահմանել աստվածաբանության հիմնական հասկացությունները,
- ներկայացնել աստվածաբանության դասավանդման մեթոդիկայի նպատակը, խնդիրները, պատմությունը «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի շրջանակներում,
- բացահայտել աստվածաբանության դասավանդման մեթոդիկայի ուսուցման, ուսումնառության առանձնահատկությունները, օրինաչափությունները «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի դասավանդման գործընթացում,
